ԵԱՀԿ

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

NCLR

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԼՄ-ՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Զեկույց

Իրավական հետազոտությունների ազգային կենտրոն

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԼՄ-ՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Զեկույց

ՀԱՆՈՒՆ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ
ԱՄՐԱՊՆԴՄԱՆ

Իրավական հետազոտությունների ազգային կենտրոն

Երևան 2010

©ԵԱՀԿ 2010

Զեկույցը պատրաստվել է «Իրավական հետազոտությունների ազգային կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից՝ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ:

ISBN: 978-92-9235-845-7

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ 4

ՆԱԽԱԲԱՆ 5

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՋԼՄ-ՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՅԱՑՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ-ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ (ՇՐՋԱՆԱԿԸ) ՀՀ-ՈՒՄ 8

ՀՀ-Ն ՄԱՐԶԵՐՈՒՄ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՋԼՄ-ՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ/ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ (ըստ անցկացված կլոր սեղանների և դիտարկումների արդյունքների) 15

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 23

ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 28

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 31

ՀԱՎԵԼՎԱԾ 36

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

«Իրավական հետազոտությունների ազգային կենտրոն» հասարակական կազմակերպությունն իր շնորհակալություն է հայտնում ԵԱՀԿ երևանյան գրասենյակին՝ ծրագրի իրականացմանը ֆինանսական և մեթոդական աջակցություն ցուցաբերելու համար, ինչպես նաև ոստիկանության ղեկավարությանը համագործակցության պատրաստակամության դրսևորման և ՁԼՄ-ների ու առանձին լրագրողներին կազմակերպված կլոր սեղան-քննարկումներին ակտիվ մասնակցության և հնչեցրած նպաստավոր առաջարկությունների համար:

ՆԱԽԱԲԱՆ

Ուսումնասիրության առարկան և դրա կարևորությունը

Սույն ուսումնասիրության առարկան ոստիկանության և զանգվածային լրատվամիջոցների փոխհարաբերություններն են, դրանցում առկա հիմնախնդիրները, խոչընդոտները, դրանք ծնող սոցիալ-հոգեբանական, իրավական պատճառներն ու պայմանները, ինչպես նաև այն հետևանքները, որոնք այսօր առկա են մեր իրականությունում: Միաժամանակ, սույն հետազոտության և վերլուծության շրջանակում ուսումնասիրվում և քննարկվում են այն եղանակներն ու միջոցները, որոնք կարող են նպաստել այդ երկու կառույցների փոխհարաբերությունների բարելավմանը՝ նախադրյալներ ստեղծելով վերջիններիս հետագա համագործակցության ակտիվացման և սերտացման համար:

Գաղտնիք չէ, որ ներկայումս այս երկու հասարակական և պետական ինստիտուտների փոխհարաբերություններում, տարաբնույթ հանգամանքներով պայմանավորված, առկա են որոշակի լարվածություն և անհանդուրժողականություն, որոնք նպաստում են փոխադարձ անվստահության և անտարբերության մթնոլորտի ձևավորմանը:

Վերը նկարագրված իրավիճակի առավել խորացումը կասեցնելու և գոյություն ունեցող լարվածությունը հնարավորինս մեղմելու մղումով՝ «Իրավական հետազոտությունների ազգային կենտրոն» հասարակական կազմակերպությունը, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի (ԵԱՀԿ) աջակցությամբ ու վերջինիս հետ համատեղ, 2009 թվականին ՀՀ մարզերում նախաձեռնեցին ոստիկանության մարզային և տարածքային կառույցների, ինչպես նաև տեղի ԶԼՄ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ իրականացրեցին «ոստիկանություն և ԶԼՄ-ներ փոխհարաբերությունների բարելավում» թեմայով կլոր սեղանների շարք:

Բոլոր մարզերում «Հանուն վստահության ամրապնդման» խորագրով այս կլոր սեղանների շարքը անցկացվեց լրագրողների և ոստիկանների կողմից բավականին անկաշկանդ և կառուցողական մթնոլորտում: Փոխադարձ հանդուրժողականության և համագործակցելու պատրաստակամության գիտակցությամբ քննարկումներ ծավալվեցին միմյանց միջև համագործակցությունը խոչընդոտող հիմնախնդիրների, այն ծնող պատճառների և դրանց վերացմանն ուղղված քայլերի շուրջ: Կարևորելով այս կլոր սեղանների շարքը և ողջունելով ցուցաբերած նախաձեռնությունը՝

երկու կողմերն էլ ծավալեցին առարկայական քննարկումներ, ինչպես տեղեկությունների ստացման, տրամադրման դժվարությունների, խոչընդոտների, լրագրողների նկատմամբ դրսևորված սահմանափակումների, բռնության դեպքերի, այնպես էլ հանցավորության դեմ պայքարում համագործակցության բացակայության, համատեղ միջոցառումների կազմակերպման անհրաժեշտության, ոչ օբյեկտիվ և ոչ լրիվ տեղեկատվության վնասակարության, տեղեկատվության գաղտնիության ռեժիմների շուրջ:

Մասնակից կողմերը, կարևորելով համագործակցության անհրաժեշտությունն ու անհետաձգելիությունը, ձեռք բերեցին կոնկրետ պայմանավորվածություններ՝ միմյանց միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունն առավել գործուն և բարձր մակարդակի վրա տեղափոխելու ուղղությամբ: Միաժամանակ, այդ ցանկալի արդյունքին հասնելու նպատակով երկուստեք եղան խնդրանք-առաջարկություններ՝ թեմայի առարկայի վերաբերյալ մեթոդական ցուցումների, ուղեցույցների կազմման, այլ երկրներում համագործակցության ընդունված լավագույն փորձի, օրենսդրական կարգավորումների և դրանց իմպլեմենտացիոն առանձնահատկությունների շուրջ համապատասխան դասընթացների, պարբերական համատեղ հանդիպումների, սեմինարների, նմանատիպ կլոր սեղանների կազմակերպման առումով:

Ներկայացվող ուսումնասիրությունը բաղկացած է երկու բաժնից՝

-- առաջին բաժնում ամփոփված են ոստիկանության և ՁԼՄ-ների միջև ծագող հասարակական հարաբերություններն իրավական կարգավորման ենթարկող օրենսդրական ակտերն, ինչպես նաև այդ հարաբերությունների վերաբերյալ իրավական վերլուծություններն ու հետևությունները,

-- երկրորդ բաժնում ներկայացված են ոստիկանության և ՁԼՄ-ների մարզային կառույցների համակարգերը, անցկացված կլոր սեղանների ընթացքում ներկայացված հիմնախնդիրները և կլոր սեղանի մասնակիցների կողմից հիմնախնդիրների լուծմանն ուղղված առաջարկություններն ու ձեռք բերված պայմանավորվածությունները:

Մեթոդաբանություն

Սույն ուսումնասիրության համար տեսական և մեթոդական հիմք են հանդիսացել խնդրո առարկային վերաբերող տեսական, կիրառական և վերլուծական նյութեր պարունակող փաստաթղթեր և դրանց վերլուծություններ, այդ թվում՝

-- ներպետական նորմատիվ և միջազգային իրավական ակտերի վերլուծություն,
-- ՁԼՄ-ներում տեղ գտած հրապարակումների, վերլուծական նյութերի ուսումնասիրություն և ՀՀ ոստիկանության պաշտոնական www.police.am կայքէջի օպերատիվ ամփոփագրում զետեղված տեղեկությունների ուսումնասիրում,
-- անցկացված հարցումների և դիտարկման արդյունքների հետազոտություն,
-- ներպետական դատական ատյանների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առանձին գործերի վերլուծություն,
-- մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի տեղեկատվական բազայի ուսումնասիրություն: Մարդու իրավունքների պաշտպանի 2008 և 2009թթ. տարեկան զեկույցների առանձին հատվածների մեջբերում,
-- յուրաքանչյուր մարզում կազմակերպված կլոր սեղանների ընթացքում մասնակիցների կողմից ներկայացրած տեսակետների ու առաջարկությունների ամփոփ ներկայացում և վերլուծություն:

Ուսումնասիրության ընթացքում հանդիպումներ են եղել ՀՀ ոստիկանության բոլոր մարզային վարչությունների և բաժինների ղեկավար անձնակազմի, ինչպես նաև մարզում գործող զանգվածային լրատվամիջոցների, մամուլի ակումբների ներկայացուցիչների հետ: Թեմայի շուրջ մասնավոր առանձին զրույցներ են տեղի ունեցել մարզերում գործող հասարակական կազմակերպությունների, պահեստազորում գտնվող ոստիկանների հետ, որոնց ներկայացրած մոտեցումները ևս ամփոփվել և վերլուծության են ենթարկվել սույն հետազոտության շրջանակում:

Ուսումնասիրության համար կիրառվել են հատկապես համեմատական և իրավիճակային մոտեցումների վերլուծության, համադրման, տեղայնացման և այլ մեթոդներ:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԼՄ-ՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՅԱՑՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ-ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ (ՇՐՋԱՆԱԿԸ) ՀՀ-ՈՒՄ

1991 թվականին ՀՀ անկախացումը և 1995 թվականին արդեն ՀՀ Սահմանադրության ընդունումն ընդգծեց այն ուղենիշը, ճանապարհի գլխավոր ուղղությունները, որոնք Հայաստանի Հանրապետությունը դարձնելու էին իրավական, ժողովրդավարական պետություն: Ժողովրդավարական գործընթացները, որոնք իրականացվում էին Հայաստանի Հանրապետությունում, օբյեկտիվորեն ենթադրում էին արմատական փոփոխություններ գործող օրենսդրությունում:

Այս փոփոխությունների արդյունքում ամրագրվեց ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածը, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից: Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է:

Նույնաբովանդակ դրույթ ամրագրված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում (այսուհետ նաև՝ Կոնվենցիա): Խոսքը Կոնվենցիայի 10-րդ հոդվածի մասին է, որն ունի բովանդակային երեք բաղադրիչ՝ սեփական կարծիք ունենալու ազատություն, տեղեկություններ և գաղափարներ ստանալու ազատություն ու տեղեկություններ և գաղափարներ տարածելու ազատություն:

Վերը նշված իրավունքի (իրավունքների) իրականացման ոլորտում իրենց կարևորագույն առաքելությունն ունեն զանգվածային լրատվության միջոցները, որոնք շատ հաճախ իրավամբ անվանվում են «չորրորդ իշխանություն»: Այդ իսկ պատճառով պատահական չէ, որ այս եզրը պարբերաբար կիրառվում է գրավոր և բանավոր խոսքում: Այն բնորոշում և կարևորում է այն դերը, որն ունեն զանգվածային լրատվության միջոցները (այսուհետ նաև՝ ԶԼՄ) լայն իմաստով պետության՝ հասարակության կյանքում: Այդ դերն արտահայտվում է նրանում, որ արդի ժամանակաշրջանում գիտության, այդ թվում՝ տեխնիկայի զարգացման այս բարձր մակարդակի, նորագույն տեխնոլոգիաների պայմաններում հնարավոր չէ

լիարժեք ապահովել մարդու՝ ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխանաբար 27-րդ և 10-րդ հոդվածներով ամրագրված իրավունքների իրականացումն առանց ՁԼՄ-ների, քանի որ հենց վերջիններս են, որ այս իրավունքների իրականացման համար ստեղծում են կարևոր նախադրյալ: Ահա այս կարևորագույն ոլորտը, ինչպես հասարակական կյանքի այլ ասպեկտներ, ենթակա են իրավական կարգավորման, որն իր հետ կարող է բերել որոշակի սահմանափակումներ:

Այդ սահմանափակումներին անդրադառնում է նաև Կոնվենցիան, որի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն այդ ազատությունների իրականացումը կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունը կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու համար:

Այսինքն՝ Կոնվենցիան սահմանում է, որ մարդու այդ իրավունքը չի կարող կիրառության մեջ դրվել անսահմանափակ դրսևորումներով, այլ կարող է սահմանափակվել՝ պայմանավորված այնպիսի կարևորագույն արժեքներով և գործոններով, ինչպիսիք են պետական և հասարակության անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը, առողջությունը, բարոյականությունը և այլն:

Խնդրո առարկա ոլորտը կարգավորող հիմնական ներպետական իրավական ակտերից է «Տեղեկատվության ազատության մասին» (ընդունված 2003թ. սեպտեմբերի 23-ին) և «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքները (ընդունված 2003 թ. դեկտեմբերի 13-ին):

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, սահմանում տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաև տեղեկություններ ստանալու կարգը, ձևերը և պայմանները: Սույն օրենքը սահմանում է իր գործողության ներքո գտնվող սուբյեկտների շրջանակը: Ինչ վերաբերում է «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքին, այն կարգավորում է զանգվածային լրատվության իրականացման հետ կապված հարաբե-

ությունները, սահմանում լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի ապահովման երաշխիքները, լրագրողի հավատարմագրման, տարածված տեղեկության հերքման և պատասխանի իրավունքի իրացման հիմնադրույթներն ու այն հիմքերը, որոնց առկայության դեպքում լրատվական գործունեություն իրականացնողները պատասխանատվության ենթակա չեն:

Հատկանշական է այն փաստը, որ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը որևէ ձևով չի կարգավորում ինտերնետային կայքէջերի ստեղծման ու գործունեության հետ կապված հարաբերությունները:

Ինտերնետային կայքէջն (այսուհետ՝ կայքէջ) իրենից ներկայացնում է տեղեկատվական աղբյուր, թեև ինտերնետը (ինտերնետ կապ) համարվում է կապի, ոչ թե զանգվածային լրատվության միջոց: Տպագիր մամուլն ու հեռուստատեսությունը, ռադիոն, ըստ էության, միակողմանի կապ են պահպանում հասարակության հետ, այնինչ ինտերնետը բազմակողմանի լիարժեք կապ հաստատելու հնարավորություն է ստեղծում յուրաքանչյուրի համար: Ինտերնետային կայքէջերի միջոցով հասարակության տարբեր շերտեր օպերատիվ կերպով ստանում են տեղեկություններ, ինչպես ներպետական կյանքի տարբեր ոլորտների, այնպես էլ աշխարհում կատարվող իրադարձությունների մասին: Տպագիր մամուլը տեղեկատվությունն ապահովում է նախորդ օրվա (օրերի) ընթացքում տեղի ունեցածի վերաբերյալ, այն դեպքում, երբ հեռուստատեսությունը և կայքէջերը կարողանում են շատ արագ արձագանքել տեղի ունեցող իրադարձություններին: Ամփոփելով վերջին միտքը՝ կարելի է ասել, որ ինտերնետ կապի ոլորտի կարգավորման վրա նույնպես անհրաժեշտ է հրավիրել օրենսդրի ուշադրությունը:

Այսպիսով, անկախ այն հանգամանքից, որ վերոհիշյալ օրենքները ենթակա են արդիականացման, դրանք, այնուամենայնիվ, բավարար իրավական բազիս են՝ հասարակական կյանքի այս բնագավառում արդյունավետ գործունեություն ծավալելու և վերը հիշատակված մարդու սահմանադրական իրավունքները կենսագործելու համար: Սակայն իրավական հենքի կամ դրանից բխող պայմանների ստեղծմանն ուղղված ձևական, ասել է թե՝ իմիտացիոն միջոցառումների իրականացումը չի կարող կյանքի կոչել մարդկանց այն իրավունքները, որոնց մասին խոսեցինք նախորդ հատվածներում:

Այս հարցում իրենց ուրույն տեղն ու դերն ունեն պետական կառույցները, որոնք պետք է համագործակցեն և, իրենց համապատասխան պարտականություններն իրականացնելով, նպաստեն մարդու նշված իրավունքնե-

րի իրականացմանը, ԶԼՄ-ների արդյունավետ, բազմակողմանի գործունեության ծավալմանը: Այս խնդրին է անդրադառնում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանն իր 2008 թվականի տարեկան զեկույցում (այսուհետ՝ զեկույց), որը տեղի է ունեցել 2009 թվականի մարտի 10-ին: Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցում նշվում է, որ ՀՀ-ում տեղեկատվության ազատության տեսանկյունից լուրջ խնդիրներ գոյություն ունեն: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի տրամադրումն իրականացվում է ՀՀ կառավարության սահմանած կարգով, մինչդեռ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մինչև օրս կառավարության կողմից նման կարգ չի սահմանվել: Այս ամենի պատճառով որոշ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ հրաժարվում են ըստ պահանջի տեղեկություն տրամադրել՝ պատճառաբանելով նշված կարգի բացակայությունը:

Այս խնդրի լուծման առումով կարևոր նշանակություն ունի պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև հասարակական, հասարակական-քաղաքական ինստիտուտների կողմից իրենց դերակատարության ճիշտ ընկալումը: Վերոնշյալ միտքը մասնակիացնելով՝ հարկ է ուշադրությունը կենտրոնացնել ԶԼՄ-ների և ոստիկանության փոխհարաբերությունների խնդրին՝ հաշվի առնելով այս երկու կառույցների առանձնահատուկ դերը հասարակական կյանքում:

Հասարակությունում ձևավորված է կարծիք, որ ոստիկանությունը զինվորական կառույց է՝ իրենից ներկայացնելով բարդ և փակ համակարգ, ինչը համապատասխանում է իրականությանը, այնինչ վերջինս պետք է լինի ծառայություններ մատուցող կառույց և իր գործունեությունն իրականացնի թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների հիման վրա: Համաձայն «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ ՀՀ ոստիկանությունն ապահովում է մարդու անվտանգությունը, հանցագործությունների և վարչական իրավախախտումների նախականխումը, կանխումը և խափանումը, հանցագործությունների հայտնաբերումը և բացահայտումը, քրեական գործով նախնական քննությունը, հասարակական կարգի պահպանությունը և այլն:

Ոստիկանության բազմակողմանի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի ու «Տեղեկատվության ազատության մասին» և «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքների գործնական կիրառության ընթացքում առաջանում են խնդիրներ՝ կապված այդ իրավական ակտերի

միջև տարբեր ոլորտներ կարգավորող հակասությունների հետ: Այս առումով կարևոր է ինչպես իրավական ակտերի ներդաշնակեցումը, այնպես էլ իրավական ակտերի ճիշտ ընկալումն ու կիրառումը, որն էլ հնարավորություն կտա նվազագույնի հասցնել այսօր առկա խնդիրները: Մասնավորապես, ոստիկանությունն իր գործունեության ընթացքում չպետք է որևէ գործողությամբ կամ անգործությամբ առանց իրավական հիմնավորման խոչընդոտներ ստեղծի ՁԼՄ-ների համար: Պատահական չէ, որ այսօր ՁԼՄ-ները ոստիկանությանը դիտում են որպես մի համակարգի, որը պահպանել է խորհրդային ժամանակներից ավանդաբար իրեն բնորոշ անվստահելիի և չշփվողի որակները:

Այս երկու ինստիտուտների միջև համագործակցության հետ կապված խնդիրները բազմազան են, և այսպիսի իրավիճակներ բնորոշ են հիմնականում զարգացող պետություններին, ինչպիսին Հայաստանի Հանրապետությունն է, քանի որ պետական մարմինները, համակարգային թերություններ և այլ սուբյեկտիվ հանգամանքներ թաքցնելու նպատակով, շատ հաճախ փորձում են դուրս գալ հասարակական վերահսկողության շրջանակից, իսկ ՁԼՄ-ների ներկայացուցիչները, հակառակը, փորձում են իրենց մասով հնարավորինս «սեղմել» այդ շրջանակը, և այս պարագայում առաջ է գալիս շահերի հակասություն, այնինչ, շահերի ներդաշնակության հրամայականը ծագում է այն պարզ պատճառով, որ այդ երկու կարևորագույն ինստիտուտները ծառայում են կամ կոչված են ծառայելու քաղաքացիական հասարակությանը՝ նպաստելով հասարակական կյանքի ներդաշնակ զարգացմանը, հասարակական կարգի պահպանությանը, հանցագործությունների կանխարգելմանն ու բացահայտմանը: Ոստիկանության և ՁԼՄ-ների համագործակցության ընթացքում ոստիկանությունը չպետք է ցավագին ընդունի ՁԼՄ-ների ներկայացուցիչների՝ ոստիկանական համակարգին վերաբերող կամ այդ համակարգում կատարված հանցագործության առիթով տեղեկություն ստանալուն ուղղված իրավաչափ, թեև բազմաթիվ փորձերին: Վերը գրվածն իր մեջ է ներառում հասարակական վերահսկողության ինստիտուտը: Հասարակությունը, այսինքն՝ քաղաքացիական հասարակությունը հասարակական վերահսկողություն է իրականացնում պետական կառավարման ոլորտի, այդ թվում՝ ոստիկանության գործունեության նկատմամբ: Այդ վերահսկողությունն իրականացվում է նաև ՁԼՄ-ների միջոցով, որը վերահսկողություն է համագործակցության նպատակով: Հասարակական վերահսկողությունը, այդ թվում՝ ՁԼՄ-ների միջոցով, իրենից ներկայացնում է համագործակցություն, որն ավելի ցայտուն է դրսևորվում, երբ ՁԼՄ-ներն օգնում են վերհանել հասարակական կյանքի, այդ թվում՝ ոստիկանական համակարգի արատավոր երևույթները՝ կոռուպցիան, ներսում տիրող արատավոր բարքերը, ոստիկանների կողմից կատարվող խախտումները և այլն, որն օգ-

նում է իշխանություններին առավել արդյունավետ կերպով պայքարել այդ ամենի դեմ: Այս առումով կարևորվում է 2009 թվականի մարտի 19-ին տեղի ունեցած «Մենք ազատ հասարակություն չենք» կոնֆերանսի մասնակիցներից մեկի՝ ԱՄՆ դեսպան Մարի Յովանովիչի խոսքը, որն, անդրադառնալով մամուլի և խոսքի ազատությանը, ընդգծեց, որ հետաքննող լրագրողների միջոցով կառավարությունը կարող է արդյունավետորեն պայքարել կոռուպցիայի դեմ՝ ավելացնելով, որ նրանք կխրախուսեն ՀՀ - կառավարության այն քաղաքականությանը, որն ուղղված կլինի աշխույժ և ազատ մամուլի կայացմանը:

Համագործակցության դասական դրսևորում կարելի է համարել ԶԼՄ-ների հաղորդումները հանցագործությունների վերաբերյալ: Դա արտացոլված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում, որի համաձայն՝ քրեական գործ հարուցելու առիթ են հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները: Սրանից ելնելով՝ պետությունը, որպես հասարակության կողմից լիազորված կազմակերպություն, իր մշտական ուշադրության կենտրոնում պետք է պահի այս կարևորագույն ոլորտը՝ ձգտելով կատարելագործել, համահունչ դարձնել զարգացող հասարակական հարաբերություններին և հասարակության ավելացող ու փոփոխվող պահանջմունքներին այն իրավական ակտերը, որոնք իրավական մեխանիզմներ են սահմանում այդ ոլորտում ծագող հասարակական հարաբերությունների կարգավորման համար, ստեղծել իրական երաշխիքներ այդ իրավական ակտերի կենսագործման համար: Նման երաշխիք կարող են համարվել ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված հոդվածները, որոնք նախատեսում են քրեական պատասխանատվություն լրագրողի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու համար: Սակայն, նմանատիպ երաշխիքները կարող են կրել նաև ձևական բնույթ, եթե պետությունը չցուցաբերի կամք՝ դրանք կյանքի կոչելու համար: Պետական կամքի դրսևորման օրինակ կարող է համարվել ոստիկանության գործունեության իրական թափանցիկության ապահովումը, ոստիկանության ոչ ձևական համագործակցությունը ԶԼՄ--ների հետ կամ այդպիսի համագործակցության հասնելու վերջինիս անկեղծ ցանկության ռեալ դրսևորումները, վերջին տարիների ընթացքում ԶԼՄ-ների ներկայացուցիչների նկատմամբ իրականացրած հանցագործությունների շուտափույթ բացահայտումները, այս ամենը հնարավորություն կտա աստիճանաբար վերականգնել կորցված փոխադարձ վստահությունը:

Վերը շարադրվածի համատեքստում շատ կարևորվում է Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցի այն հատվածը, որը վերաբերում է այս ոլորտում գոյություն ունեցող խնդիրներին:

Պաշտպանն իր զեկույցում արձանագրում է, որ անձի տեղեկություն ստանալու սահմանադրական իրավունքի իրականացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի լրատվության միջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովումը: Օմբուդսմանը որպես ցավալի փաստ է դիտում 2008 թվականի ընթացքում, ինչպես և նախորդ տարիներին, լրագրողների նկատմամբ արձանագրված բռնության դեպքերը՝ նրանց մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու նպատակով: Որպես Օմբուդսմանի խոսքի շարունակություն՝ անհրաժեշտ է հիշատակել ԶԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ-ի մամուլի ազատության գծով ներկայացուցչի խորհրդական Աննա Կարլսռայթերի խոսքը, որը հնչել է նույն թվականի մարտի 19-ին տեղի ունեցած «Մարդու իրավունքները Հայաստանում» կոնֆերանսի ժամանակ: Վերջինս ընդգծել է, որ Հայաստանում մամուլն ազատ չէ և լրագրողները չեն կարողանում ազատորեն իրականացնել իրենց մասնագիտական գործունեությունը: Նա արձանագրել է, որ Հայաստանում լրագրողները պարբերաբար ենթարկվում են բռնությունների: Իսկ նույն կոնֆերանսի մասնակից Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի նախագահ Լևոն Բարսեղյանն էլ հայտարարել է, որ, եթե 2007 թվականին Հայաստանում լրագրողների նկատմամբ գրանցվել է բռնության 7 դեպք, ապա 2008 թվականին այդ թիվը հասել է արդեն 14-ի:

Երբեմն անցնելով թույլատրելի սահմաններն ինչպես ոստիկանության, այնպես էլ ԶԼՄ-ների ներկայացուցիչներն իրար են ներկայացնում տարատեսակ մեղադրանքներ: Այս ամենը նպաստում է հակառակ գործընթացի զարգացմանը. ձևավորվում է փոխադարձ անվստահության մթնոլորտ, որն էլ բացասաբար է անդրադառնում առաջին հերթին ոստիկանության հեղինակության վրա՝ հանգեցնելով վերջինիս գործունեության արդյունավետության անկմանը՝ առաջ բերելով հասարակության լայն շերտերի դժգոհությունն այդ կառույցի նկատմամբ:

ՀՀ-Ն ՄԱՐԶԵՐՈՒՄ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԼՄ-ՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ/ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ (ըստ անցկացված կլոր սեղանների և դիտարկումների արդյունքների)

Զանգվածային լրատվամիջոցների տեսակների, թվաքանակի և դրանց տեղաբաշխման, ինչպես նաև ոստիկանական մարզային ծառայությունների և դրանց կառուցվածքային ստորաբաժանումների կազմի ընդհանուր նկարագիրը

Հայաստանի Հանրապետության մարզերը, զանգվածային լրատվության միջոցների բազմազանության ու հագեցվածության, ինչպես նաև նրանց գործունեության ակտիվության առումով, գնահատվում են իբրև ոչ համաչափ զարգացած և խիստ բևեռացված: Ըստ մեր դիտարկման արդյունքների՝ զանգվածային լրատվության միջոցների հագեցվածության աստիճանը պայմանականորեն կարելի է դասակարգել երեք մակարդակի՝ կրիտիկական, հուսադրող և բավարար զարգացած:

Վիճակն առավել կրիտիկական է Վայոց Ձորի և Արագածոտնի մարզերում: Այդ մարզերում ընդհանրապես չեն գործում տեղական որևէ հեռուստատեսություն կամ ռադիո: Արագածում գործող թերթերը երեքն են, իսկ Վայոց Ձորում՝ երկուսը, որոնք տպագրվում են ամիսը մեկ կամ, լավագույն դեպքում, երկու անգամ, կամ ավելի երկար պարբերականությամբ, ինչն էլ, անշուշտ, չի ապահովում տեղեկատվության պահանջվող օպերատիվությունը[1]:

Վիճակը հուսադրող է Կոտայքի, Գեղարքունիքի, Սյունիքի, Տավուշի, Արարատի և Արմավիրի մարզերում, որտեղ, չնայած որոշակի ֆինանսական խնդիրներին ու դժվարություններին, այնուամենայնիվ գործում են մեկ կամ երկու հեռուստատեսություն և տպագրվում են մի շարք թերթեր:

Զանգվածային լրատվամիջոցների զարգացածությամբ և գործունեության ակտիվությամբ առանձնանում են Շիրակի և Լոռու մարզերը, որտեղ գործում են մի քանի հեռուստաընկերություններ, տպագրվում են թերթեր ու պարբերականներ: Բացի այդ, տեղերում գործում են նաև հանրային և «Ազատություն» ռադիոկայանների, Արմենպրես լրատվական գործակալության թղթակիցները, որոնք մշտապես տեղեկատվություն են հաղորդում

[1]Տե՛ս «Քննարկվեցին ոստիկանություն-զանգվածային լրատվամիջոցներ փոխհարաբերության հիմնախնդիրը», «Արագած Աշխարհ» թերթ, թիվ 5-6 (90) (3018) մայիս 2009թ., էջ 1

մարզում տիրող իրավիճակի և տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ:

Չնայած մարզերի մեծ մասում գործում են տեղական հեռուստաընկերություններ, հաշվի առնելով դրանց տեխնիկական վիճակը և մարզերի ռելիեֆը, բոլոր համայնքներում չէ, որ վերջիններս ի վիճակի են հեռարձակելու հաղորդումներ, իսկ տպագրվող սակավաթիվ թերթերը հազվադեպ են առաքվում մարզի ծայրամասային համայնքներ: Մասնավորապես, խնդիրը նկատելի է Գեղարքունիքի Վարդենիս և Ճամբարակ քաղաքներում, Սյունիքի Մեղրի և Ագարակ քաղաքներում, ինչպես նաև Տավուշի Բերդ քաղաքում ու դրանց հարակից համայնքներում:

Այսօր մարզերի ազգաբնակչության դեռևս աննշան հատվածին է ընկալելի ու հասանելի էլեկտրոնային մամուլը, իսկ տպագիր մամուլ, զգալի մասն այլևս չի ընթերցում, ուստի տեղեկատվության առաջնային աղբյուր շարունակում են մնալ հեռուստատեսությունը և ռադիոն: Եթե մայրաքաղաքի մոտ գտնվող որոշ մարզկենտրոնների, մասնավորապես՝ Աշտարակ և Արտաշատ քաղաքների և դրանց կից համայնքների տեղական զանգվածային լրատվության սպասարկման դաշտը կարող են ծածկել հանրապետական նշանակության հեռուստաընկերությունները՝ տեղի հնչեղություն ունեցող իրադարձություններին անմիջապես արձագանքելով և լուսաբանելով, ապա նույնը չի կարելի ասել սահմանամերձ և հեռավոր մարզերի ու համայնքների դեպքում: Հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը կոչված է ապահովելու ոչ միայն ազգաբնակչության իրազեկվածության և տեղեկացվածության խնդիրն, այլ նաև անվտանգության իմաստով այն ունի էական նշանակություն:

Բացի այդ, անժխտելի է այն փաստը, որ զանգվածային լրատվության միջոցների առկայությունը և ակտիվ գործունեությունը միանշանակորեն իրենց անմիջական ազդեցությունն են թողնում պետական և մունիցիպալ մարմինների, պաշտոնատար անձանց գործունեության թափանցիկության և հաղորդակցության պահանջների ապահովման վրա՝ նրանց անընդհատ պահելով հանրային վերահսկողության ներքո: Գործունեության թափանցիկության պահանջը կրում է համատարած և անվերապահ բնույթ՝ տարածվելով յուրաքանչյուր հանրային, այդ թվում՝ ուժային կառույցների կենտրոնական և տարածքային ստորաբաժանումների վրա, իսկ տեղերում այդ կառույցների, այդ թվում՝ ոստիկանության կենտրոնական ու տարածքային ստորաբաժանումների, գործունեությունը հանրային ուշադրության կենտրոնում պահելու առաքելությունն առաջին հերթին դրված է տեղական լրատվամիջոցների վրա:

Հայաստանի Հանրապետության մարզերում գործող զանգվածային լրատվամիջոցների ընդհանուր պատկերը հետևյալն է.

ՄԱՐԶ	ՔԱՂԱՔ	ԹԵՐԹ	ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔ	ՀՐԱԶԴԱՆ	«ԿՈՏԱՅՔ»	«ՀՐԱԶԴԱՆ»
	ԱԲՈՎՅԱՆ		«ՆԱՐԵԿ»
	ՉԱՐԵՆՑԱՎԱՆ		««ԼՈՒՍԱԼԻՔ»
ԱՐՄԱՎԻՐ	ԱՐՄԱՎԻՐ	«ՀԱՅՐԵՆԱԿԱՆՉ» «ՇՐՋԱԴԱՐՁ»	«ALT» «ՆՈՅ ՀԱՅԱՍՏԱՆ»
	ԷՋՄԻԱԾԻՆ		
ԱՐԱԳԱԾՈՏՆ	ԱՇՏԱՐԱԿ	«ԱՐԱԳԱԾ ԱՇԽԱՐՀ»	
	ԱՊԱՐԱՆ	«ԹԱԼԻՆ ԱՇԽԱՐՀ»	
	ԹԱԼԻՆ	«ԿԱՆԹԵՂՆ ԱՐԱԳԱԾԻ»	
ԱՐԱՐԱՏ	ԱՐՏԱՇԱՏ	«ԱՐՏԱՇԱՏ»	«ԱՐՏԱՇԱՏ»
	ԱՐԱՐԱՏ	«ԱՐԱՐԱՏ»	
ԳԵՂԱՐ-ՔՈՒՆԻՔ	ԳԱՎԱՌ	«ԳԵՂԱՄԱ ԱՇԽԱՐՀ»	«ՔՅԱՎԱՌ»
	ՍԵՎԱՆ	«ՍԵՎԱՆ»	«ՍԵՎԱՆ»
	ՄԱՐՏՈՒՆԻ		«ՁԱՆԳԱԿ»
ՏԱՎՈՒՇ	ԻՋԵՎԱՆ	«ՏԱՎՈՒՇ» «ԻՋԵՎԱՆ»	«ԻՋԵՎԱՆ ՍՏՈՒԴԻԱ»
	ԴԻԼԻՋԱՆ	«ԴԻԼԻՋԱՆ»	
	ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ		«ՔԱՄՈՒՏ»
	ԲԵՐԴ	«ԲԵՐԴ»	
ՍՅՈՒՆԻՔ	ԿԱՊԱՆ	«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»	«ԽՈՒՍՏՈՒՓ TV» «ՍՈՍԻ»
	ԳՈՐԻՍ	«ԲԱՆՈՒԳՈՐԾ»	«ԼԱՍՏ»
	ՍԻՍԻԱՆ	«ՍԻՍԻԱՆԻ ՁԱՅՆ»	
		«ՈՐՈՏԱՆ»	
ՇԻՐԱԿ	ԳՅՈՒՄՐԻ	«ՇԻՐԱԿ»	«ՇԱՆԹ»
		«ՇՐՋԱՊԱՏ»	«ՑԱՅԳ»
		«ՀԻՆԳՇԱԲԹԻ»	«ԳԱԼԱ»
ԼՈՌԻ	ՎԱՆԱՁՈՐ	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶ»	«ԼՈՌԻ TV»
		«ՎԱՆԱՁՈՐՅԱՆ ԽՃԱՆԿԱՐ»	«ՄԻԳ»
			«9-ՐԴ ԱԼԻՔ»
	ՍՊԻՏԱԿ	«ԼՈՒՍԱՐՁԱԿ»	
	ԱԼԱՎԵՐԴԻ		«ԱՆԿՅՈՒՆ ԳՈՒՄԱՐԱԾ 3»

ՎԱՅՈՑ ՁՈՐ	ԵՂԵԳՆԱՁՈՐ	«ՎԱՅՈՑ ՁՈՐ»	
		«ՎԱՐԴԱՁՈՐ»	

Մարզերում գործող զանգվածային լրատվության միջոցների հիմնական ցանկի հետ մեկտեղ նպատակահարմար է ներկայացնել նաև ոստիկանության մարզային վարչությունների և գործող բաժինների ցանկը: Յուրաքանչյուր մարզում գործում է ոստիկանության մարզային վարչություն, որի կազմում մտնում են հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները՝

ԿՈՏԱՅՔ	Հրազդանի բաժին	ԱՐՄԱՎԻՐ	Արմավիրի բաժին
	Կոտայքի բաժին		Վաղարշապատի բաժին
	Չարենցավանի բաժին		Բաղրամյանի բաժին
	Նաիրիի բաժին		Մեծամորի բաժին
ԱՐԱԳԱԾՈՏՆ	Աշտարակի բաժին	ԱՐԱՐԱՏ	Արտաշատի բաժին
	Թալինի բաժին		Արարատի բաժին
	Ապարանի բաժին		Մասիսի բաժին
	Արագածի բաժին		
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	Գավառի բաժին	ՏԱՎՈՒՇ	Իջևանի բաժին
	Սևանի բաժին		Նոյեմբերյանի բաժին
	Մարտունու բաժին		Դիլիջանի բաժին
	Վարդենիսի բաժին		Տավուշի բաժին
	Ճամբարակի բաժին		
ՍՅՈՒՆԻՔ	Կապանի բաժին	ՎԱՅՈՑ ՁՈՐ	Եղեգնաձորի բաժին
	Սիսիանի բաժին		Վայքի բաժին
	Գորիսի բաժին		Ջերմուկի բաժին
	Մեղրու բաժին		
	Քաջարանի բաժանմունք		
ՇԻՐԱԿ	Գյումրիի բաժին	ԼՈՌԻ	Վանաձորի բաժին
	Արթիկի բաժին		Տաշիրի բաժին
	Անիի բաժին		Սպիտակի բաժին
	Ախուրյանի բաժին		Թումանյանի բաժին
	Աշոցքի բաժին		Ստեփանավանի բաժին
	Ամասիայի բաժին		Գուգարքի բաժին

Մարզերում գործում են նաև ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության քննչական, պետական պահպանության, անձնագրային և վիզաների, ճանապարհային ոստիկանության ծառայությունների տարածքային ստորաբաժանումներ:

«Իրավական հետազոտությունների ազգային կենտրոն» ՀԿ-ի կողմից՝ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ 2009 թվականի ընթացքում «Ոստիկանության-զանգվածային լրատվամիջոցների փոխհարաբերությունների բարելավում» թեմայով ՀՀ մարզերում կազմակերպված կլոր սեղաններին մասնակցեց ընդհանուր թվով 277 մարդ, այդ թվում՝ ոստիկանության մարզային վարչությունից և ենթակա ստորաբաժանումներից ոստիկանության 146 աշխատակից, ՁԼՄ-ների 118 ներկայացուցիչ, իսկ այլ մարմիններից ու կազմակերպություններից՝ 13:

Կլոր սեղանի վայրը և ամսաթիվը	Ոստիկանություն	Հեռուստաընկերություն	Թերթ	ՀԿ, այլ մասնակիցներ	Ընդհանուր
Կոտայք ք. Ծաղկաձոր 11.04.2009 թ.	15	10	1	4	30
Արմավիր ք. Արմավիր 02.05.2009 թ.	15	10	4	1	30
Արագածոտն ք. Աշտարակ 23.05.2009 թ.	15	-	8	2	25
Արարատ ք. Արտաշատ 06.06.2009 թ.	11	4	5	2	22
Գեղարքունիք ք. Սևան 27.06.2009 թ.	15	11	5	-	31
Տավուշ ք. Իջևան 25.07.2009 թ.	15	5	6	1	27
Սյունիք ք. Կապան 29.08.2009 թ.	16	8	6	-	30
Շիրակ ք. Գյումրի 26.09.2009 թ.	15	9	4	2	30

Լոռի ք. Վանաձոր 24.10.2009 թ.	15	10	6		31
Վայոց ձոր ք. Ջերմուկ 28.11.2009 թ.	14	-	6	1	21

Կլոր սեղանների մասնակիցների ցուցակն ըստ մարզերի կցվում է սույն զեկույցին՝ հավելվածի տեսքով:

Ոստիկանություն-ՋԼՄ համագործակցությանը խոչընդոտող հիմնական պատճառները ու դրանց հնարավոր լուծման ուղիները՝ ըստ լրատվամիջոցների և ոստիկանության ներկայացուցիչների

2009 թվականի ընթացքում ոստիկանության և ՋԼՄ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացված կլոր սեղանները և տեղի ունեցած քննարկումներն առավել տեսանելի դարձրեցին այդ կառույցների փոխհարաբերություններում առկա խնդրահարույց հարցերը և դրանց լուծման ուղիների, ինչպես նաև հետագա համագործակցության որակի բարձրացմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումները:

Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում ոստիկանության և ՋԼՄ-ների փոխհարաբերությունների ներկա վիճակի վերաբերյալ ընդհանուր գնահատական տալն այնքան էլ դյուրին չէ: Իհարկե, վերջիններիս փոխհարաբերությունում լարվածության և կաշկանդվածության նշաններ նկատելի էին բոլոր մարզերում՝ սրության տարբեր աստիճաններով, և, ընդհանուր առմամբ, այս երկու ինստիտուտների միջև համագործակցության մշակույթը, որպես այդպիսին, դեռևս կայացած չէ և հեռու է բավարար գնահատվելուց: Ավելին, ՀՀ անկախացումից հետո վերջիններիս փոխհարաբերությունների սերտացման առումով որևէ առաջընթաց չի արձանագրվել, նույնիսկ շատ դեպքերում այն հետընթաց է ապրել :

Այսօր ոստիկանության և զանգվածային լրատվամիջոցների փոխհարաբերությունների ձևավորմանը խոչընդոտող հիմնախնդիրները և դրանք ծնող պատճառները բազմաթիվ են ու բազմաբնույթ, ուստի, դրանց միակողմանի դիտարկումը և կարճաժամկետ ու մակերեսային լուծումների առաջադրումն այնքան էլ ճիշտ չէ: Դրանք պահանջում են խորը և համակողմանի վերլուծություն, ինչին որ կոչված է սույն զեկույցը՝ հիմնվելով ինչպես նորմատիվ իրավական կարգավորումների, դրանց կիրառման,

տեսաիրավական վերլուծությունների, այնպես էլ փորձառական/էմպիրիկ/ բազայի վրա:

Ահավասիկ, մարզերում ոստիկանության և զանգվածային լրատվամիջոցների փոխհարաբերությունների բարելավման թեմայով անցկացված կլոր սեղանների ընթացքում և՛ ոստիկանության ծառայողները, և՛ գործող տեղական լրատվամիջոցների ներկայացուցիչները բարձրաձայնեցին մի շարք հիմնախնդիրներ՝ փորձելով վերլուծել դրանք ծնող հիմնական պատճառները և ձգտելով գտնել նպատակային լուծումներ: Այդ հիմնախնդիրներն առնչվում են ինչպես տեղեկատվության ձեռքբերման կամ տրամադրման դժվարություններին, դեպքի վայրում նկարահանման կամ ձայնագրման արգելելուն, լրագրողների մասնագիտական օրինական գործունեության խոչընդոտելուն կամ այդպիսի դեպքերին արագ չարձագանքելուն, այնպես էլ ոչ ճիշտ և ոչ հավաստի լրատվության հրապարակմանը, անմեղության կանխավարկածի և մասնավոր կյանքի անձեռնմխելիության սկզբունքների խախտմանը, մասնագիտական ցածր պատրաստվածությանը, ինչպես նաև համագործակցության մի շարք այլ ավանդական եղանակների բացակայությանը:

Այն հանգամանքը, որ այս երկու հասարակական ինստիտուտների միջև սերտ համագործակցությունն անհրաժեշտություն է, որից միանշանակորեն շահում է հասարակությունը, հաստատեցին կլոր սեղանների բոլոր մասնակիցները: Եվ այդ իսկ առումով, ոստիկանության և զանգվածային լրատվամիջոցների միջև համագործակցության ցանկալի արդյունքին հասնելուն խոչընդոտող պատճառների և դրանց հիմնավոր լուծման եղանակների ու մեխանիզմների շուրջ բավականին անկաշկանդ և բովանդակալից քննարկում տեղի ունեցավ յուրաքանչյուր մարզում: Ուշագրավ է այն փաստը, որ մարզերի բարձրաստիճան ոստիկանների և լրագրողների միջև նման ձևաչափով և բավական բաց տեքստով որևէ քննարկում նախկինում տեղի չէր ունեցել: Այս կլոր սեղաններն իրենց տեսակի մեջ առաջինն էին, և դրանց դրական ազդակի ու կարևորության մասին միանշանակ հաստատեցին մասնակիցները:

Ինչևէ, կարևորելով այս հանդիպումները՝ մասնակիցները նկատեցին, որ փոխհարաբերությունների բարելավումը շարունակական և համալիր գործընթաց է, և ցանկալի դրական արդյունք կարելի է ակնկալել միայն բարձրացված խնդիրների հետևողական ու հիմնավոր լուծումների դեպքում, ինչին որ պետք է միտված լինեն ոստիկանության, զանգվածային լրատվամիջոցների, շահագրգիռ հասարակական կազմակերպությունների և հասարակության ջանքերը:

Ինչպես բարձրաձայնեցին ոստիկանության ներկայացուցիչները, ոստիկանությունը միանձնյա ուղղակի ի վիճակի չէ լուծելու իր առջև դրված բոլոր խնդիրները և հասնելու այն դրական արդյունքին, որոնք ցանկանում և պահանջում է հանրությունը: Այդ ամենին կարելի է հասնել հասարակության ակտիվ աջակցության շնորհիվ: Հասարակության աջակցությունը ոստիկանությունը կարող է վաստակել միայն իր հրապարակային, թափանցիկ և իրավաչափ աշխատանքի արդյունքում:

Մասնավորապես, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պաշտոնական հաշվետվության համագործակցության և թափանցիկության վերաբերյալ հատվածում նշվում է, որ 2008թ. ընթացքում ՀՀ ոստիկանության ղեկավարությունը, առանցքային ստորաբաժանումների պետերը 17 ասուլիսների, ճեպազրույցների միջոցով հանրությանը պարբերաբար ներկայացրել են կատարված աշխատանքները և ոլորտի հիմնախնդիրները: ՀՀ ոստիկանության ղեկավարության և տարբեր ծառայությունների ներկայացուցիչների հետ ժամանակացույցից դուրս անցկացվել են 12 հանդիպումներ, որոնք առնչվել են ՀՀ նախագահական ընտրությունների կազմակերպմանն ու անցկացմանը, հետընտրական զարգացումներին, ճանապարհային ոստիկանության ծառայությունում և անձնագրերի ու վիզաների վարչության բարեփոխումներին, անչափահասներին, թափառաշրջիկ և մուրացիկ երեխաներին, թրաֆիքինգին, կավատությանը, մարմնավաճառությանը և մտավոր սեփականության դեմ ուղղված հանցագործությունների հետ կապված խնդիրներին:

ՀՀ ոստիկանության գործունեության թափանցիկությունն ապահովելու, ոստիկանության գործունեությունն օբյեկտիվ և օպերատիվ կերպով հանրությանը ներկայացնելու առումով զգալի է ՀՀ ոստիկանության կայք էջի դերը: 2008 թվականի ընթացքում նշված կայքից օգտվել է մոտ 34 հազար մարդ (2007թ.՝ 30 հազար), ընդ որում՝ 32%-ը արտասահմանյան երկրներից:

Այս համատեքստում պետք է անդրադարձ կատարել մարզերում կազմակերպված կլոր սեղանների մասնակիցների կողմից՝ ոստիկանության և զանգվածային լրատվամիջոցների փոխհարաբերությունների ներկա մակարդակին, նրանց գործունեության որակների շուրջ ծավալված քննարկումներին և հնչեցված հիմնական մոտեցումներին ու տեսակետներին:

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Ոստիկանությունը չի տրամադրում տեղեկատվություն կամ, լավագույն դեպքում, տրամադրում է չափազանց ուշացած և կցկտուր կերպով:

Ոստիկանության մարզային և տարածքային ստորաբաժանումներում, որպես կանոն, տեղեկատվության տրամադրումը մերժվում է կամ առաջարկվում են այն տրամադրելու այնքան բարդ մեխանիզմներ, որոնք ի վերջո ԶԼՄ-ներին ստիպում են հրաժարվել տեղեկատվություն ստանալու մտադրությունից:

Ոստիկանության մարզային վարչություններում ընդհանրապես չեն կազմակերպվում մամուլի ասուլիսներ, ԶԼՄ-ներին էլ չեն տրամադրվում պաշտոնական հաղորդագրություններ՝ մարզում տիրող հանցավորության վիճակի, արձանագրված հանցագործությունների դեպքերի, դրանց բացահայտումների ցուցանիշների և ոստիկանության գործունեության այլ արդյունքների վերաբերյալ:

Մասնավորապես, ոստիկանության տեղական կառույցների ծառայողները տեղեկատվություն չեն տրամադրում ԶԼՄ-ներին մինչև կենտրոնից չստանան համապատասխան թույլտվություն կամ հրահանգ: Յուրաքանչյուր դեպքում, տեղեկատվություն ստանալու նպատակով, ԶԼՄ-ներին ուղղորդում են ՀՀ ոստիկանության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն, որը գտնվում է Երևանում, ինչն էլ, անշուշտ, էական դժվարություններ է առաջացնում տեղեկատվությունը արագ և լիարժեք կերպով ստանալու առումով, հատկապես, երբ խնդիրը վերաբերում է մարզային ԶԼՄ-ներին: Սրա հետևանքով տեղեկությունը արժեզրկվում է, քանի որ հրատապությունը կորցրած լրատվությունն այլևս - չի կարող բավարարել լսարանի պահանջները: Նման դեպքերում լրագրողները ստիպված փորձում են օգտագործել տեղեկատվության ձեռքբերման իրենց ոչ պաշտոնական աղբյուրները՝ դրանք անվանելով «մեզ հայտնի կամ մոտ գտնվող աղբյուրներ»:

- Ոստիկանության և զանգվածային լրատվամիջոցների միջև նկատվում է համագործակցության պակաս, որի արդյունքում ձևավորվում է փոխադարձ անվստահության ու լարվածության մթնոլորտ: Լրագ-

լրողները կարծում են, թե դա ոստիկանության ոչ թափանցիկ աշխատանքի հետևանքն է[2]:

Մասնավորապես, բացակայում են այս երկու կառույցների միջև համագործակցության հստակ մեխանիզմները: Բացի այդ, ոստիկանության ծառայողները վախենում են հանրության տեսադաշտում հայտնվելուց, հատկապես՝ ընդդիմադիր մամուլի ներկայացմամբ: Հարցազրույց տալիս նրանք կաշկանդված են լինում, խուսափում են տեսախցիկի առջև հայտնվելուց և որևէ հայտարարություն անելուց:

Իրենց ելույթներում կլոր սեղանների մասնակից շատ լրագրողներ կես կատակ, կես լուրջ նշեցին, որ «իրենք խնդիրներ չունեն հարաբերությունների առումով, քանի որ իրենց միջև ընդհանրապես բացակայում են լուրջ հարաբերություններ»:

- Ոստիկանությունը դեռևս փակ և անհասանելի է հասարակությանը և լրատվամիջոցներին: Ոստիկանության մարզային վարչություններում կամ դրանց ենթակա բաժիններում երբևէ չեն կազմակերպվում բաց դռների օրեր կամ լրագրողների հետ համատեղ որևէ ստուգայցեր կամ այլ միջոցառումներ: Թերևս բացառություն կարելի է համարել «Կանեփ-կակաչ», «Վահան», ինչպես նաև սեպտեմբերի 1-ի և «վերջին զանգի» միջոցառումների ժամանակ կանոնավորապես արվող հայտարարությունները:

Ուղղակի բացառվում է ոստիկանության մասնակցությամբ կատարվող գործողությունների կամ միջոցառումների վերաբերյալ ուղիղ հեռարձակումների կազմակերպումը:

Ոստիկանության մարզային վարչության և նրանց ենթակա ստորաբաժանումների ղեկավարությունը հաճախ անհասանելի են լրագրողներին: Մասնավորապես, Շիրակի մարզում գործող ՋԼՄ-ի ներկայացուցիչների պնդմամբ մարզային ոստիկանության վարչությունում սահմանված ընդունելության ժամերին կարող են այցելել նաև լրագրողներ: Սակայն լրագրողների հավաստմամբ, այդ գործընթացն այնքան էլ արդյունավետ և նպատակային չի կազմակերպված, ինչն առաջացնում է որոշակի դժգոհություն:

Մարզերի ոստիկանական կառույցներում չկա որևէ պատասխանատու

[2]Տե՛ս «Համագործակցելու նախադրյալներ կան», «Շրջապատ» թերթ, թիվ 38 (276) 30 սեպտեմբերի 2009թ., էջ 5

աշխատակից՝ կոչված կազմակերպելու կամ համակարգելու տեղերում լրագրողների հետ ոստիկանության ինտենսիվ աշխատանքը: Մասնավորապես, գոյություն չունի հասարակայնության և տեղեկատվության տրամադրման հարցերով լիազորված ոստիկան:

- Ոստիկանության կողմից ցուցաբերվում է խտրական վերաբերմունք լրատվամիջոցների նկատմամբ: Ոստիկանության մասին հիմնական տեղեկատվությունը հանրությունը ստանում է «02» շաբաթերթից և նույնանուն հեռուստահաղորդումներից[3]:

Մասնավորապես, Գեղարքունիքի մարզում կազմակերպված կլոր սեղանի մասնակից լրագրողները հիշատակեցին որոշ դեպքեր, երբ մարզային լրատվամիջոցներին տեղեկություն չի տրամադրվել, չի թույլատրվել լուսանկարել դեպքի վայրը, լուսաբանել կատարվածը, այն դեպքում, երբ այդ ամենն առանց որևէ խոչընդոտի թույլատրվել է «02» շաբաթաթերթին:

Խտրականությունը նկատելի է նաև մայրաքաղաքային և մարզային զանգվածային լրատվամիջոցների միջև: Հանրային հեռուստաընկերության կամ Երևանում գործող այլ հեռուստաընկերությունների, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետություն» կամ այլ կենտրոնական պաշտոնաթերթերի նկատմամբ մարզային ոստիկանության ղեկավարության կողմից ցուցաբերվող վերաբերմունքը, կապված տեղեկատվության տրամադրման, հարցազրույցների վարման և համագործակցության այլ ձևերի հետ, էականորեն տարբերվում է տեղի լրատվամիջոցների նկատմամբ վերաբերմունքից:

Լրագրողներն, իրենց գործունեությունն իրականացնելիս, պաշտպանված չեն հնարավոր բռնության դեպքերից: Լրագրողները որևէ կերպ պաշտպանված չեն այն թաղային հեղինակությունների և քրեածին տարրերի բռնություններից, որոնց վերաբերյալ հոդվածներ են հրապարակում: Ոստիկանությունն, իր կրավորական կեցվածքով ու անտարբերությամբ, շատ դեպքերում նպաստում է այդպիսի դեպքերի տարածմանը:

Մասնավորապես, Շիրակի մարզում կազմակերպված կլոր սեղանի քննարկումների ժամանակ «Ասպարեզ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության ներկայացուցիչների և լրագրողների կողմից հիշատակվեցին բռնության մի շարք դեպքեր, որոնք կատարվել են լրագրողների դեմ նկարահանումների ժամանակ:

---

[3]Տե՛ս «Ոստիկանություն-ԶԼՄ կապի լավագույն տարբերակը համագործակցություն է», «Արարատ» թերթ, թիվ 23-24-25 (342-343-344) 19 հունիսի 2009թ., էջ 3

Երբեմն արձանագրվում են նաև զանգվածային լրատվամիջոցների խոսքի ազատության ոչ իրավաչափ սահմանափակման դեպքեր:

- Համապատասխան թույլտվության բացակայության պատրվակով արգելվում է դեպքի վայրում կատարել որևէ տեսագրում կամ ձայնագրում:

Դեպքի վայրից ռեպորտաժներ վարելիս, որպես կանոն, ուղղակի անհնար է ստանալ նշված թույլտվությունը, իսկ դեպքի մասին post factum ռեպորտաժ վարելը կնշանակի ուշացած տեղեկատվություն, որի կարիքն հասարակությունն, ըստ էության, չունի:

Արմավիրի մարզում կազմակերպված կլոր սեղանի քննարկման ժամանակ լրագրողները նշում էին նաև, որ երբեմն դեպքի վայրում նկարահանումների արգելումը դրսևորվում է օպերատորների ձեռքից տեսախցիկները խլելով, իսկ Շիրակի մարզում լրագրողների պնդմամբ այս խնդիրն այն աստիճան ծայրահեղ բնույթ է կրում, որ հնարավոր է նույնիսկ արգելվի ոստիկանության շենքի նկարահանումը:

- Ոստիկանության ներկայացուցիչները տեղյակ չեն կամ հստակ պատկերացում չունեն զանգվածային լրատվամիջոցների գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի մասին, ընդհանրապես ծանոթ չեն լրագրողների իրավունքներին և մասնագիտական գործունեության առանձնահատկություններին:

Ոստիկանների զգալի մասն ուղղակի տեղյակ չի զանգվածային լրատվության միջոցների գործունեության ինքնակարգավորման մեխանիզմների յուրահատկություններին և երբեմն փորձում հավասարության նշան դնել և զուգահեռներ անցկացնել իրենց ծառայողական գործունեության և լրագրողի մասնագիտական պարտականությունների միջև՝ առաջարկելով իրենց վրա դրված սահմանափակումները և պահանջները տարածել նաև լրագրողների նկատմամբ: Հատկապես խոսքը գնում է ծառայողական էթիկայի կանոնների մասին,երբ ոստիկանների նկատմամբ այդ պահանջները կրում են իրավական բնույթ, իսկ լրագրողների դեպքում էթիկայի կանոնները բացառապես բարոյականության և պրոֆեսիոնալիզմի նշանակություն ունեն, և դրանք խախտելիս իրավական հետևանքներ չեն առաջանում:

Գեղարքունիքի մարզում լրագրողները նաև ընդգծեցին, որ երբեմն ոստիկանության ծառայողները, պետական գաղտնիքի անհարկի պատճառա-

բանությամբ, չարաշահում են տեղեկատվության տրամադրումը մերժելու հիմքը՝ փորձելով այդ կերպ մերժել ցանկացած բնույթի տեղեկության տրամադրում: Նման դեպքերում, ըստ Գյումրիի «Ճանթ» հեռուստաընկերության լրագրողի, հասարակությունն այս կամ այն քրեական գործի կամ տեղի ունեցած միջադեպի մասին տեղեկանում է տարբեր ասեկոսեներից, որի հետևանքով հանրության շրջանում սկսում են տարածվել ոչ հավաստի տեղեկություններ: Այս պարագայում նույնպես հանրության շրջանում սկսում է նվազել թե՛ ոստիկանության, թե՛ լրատվամիջոցների հեղինակությունը:

ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Լրագրողները չեն համագործակցում ոստիկանության հետ և հանրությանը առհասարակ չեն լուսաբանում ոստիկանի աշխատանքի, դրանում առկա դժվարությունների ու բարդությունների վերաբերյալ: Ոստիկանություն-ԶԼՄ նման թույլ փոխհամագործակցության հիմնական պատճառը նաև այն է, որ գոյություն չունեն համագործակցության հստակ մեխանիզմներ: Շատ դեպքերում լրագրողներն իրենք չեն ցանկանում համագործակցել ոստիկանների հետ, աջակցել ոստիկանությանը՝ վերջինիս առջև դրված խնդիրների արդյունավետ լուծման գործում: Լրագրողները հաճախ փորձում են վարկաբեկել ոստիկանի կերպարը, որն անշուշտ բացասաբար է ազդում ոստիկանի աշխատանքի նկատմամբ հանրության վստահության ամրապնդման վրա:

Մասնավորապես, ըստ Լոռու մարզում կազմակերպված կլոր սեղանի մասնակից ոստիկանների՝ ոստիկանությունն իր շատ գործառույթներ իրականացնելիս միայնակ է: Ժողովուրդը չի հավատում, չի համագործակցում, չի ընդունում ոստիկանությանը, և դրանից տուժում է պայքարը հանցավորության դեմ: Այս առումով շատ կարևոր է, թե լրագրողն ինչպես է լուսաբանում ոստիկանի աշխատանքը հանրության շրջանում[4]:

Կոտայքի մարզում կազմակերպված կլոր սեղանի ժամանակ, ոստիկանության ներկայացուցիչները հաստատեցին, որ ԶԼՄ-ների կողմից ոստիկանությանն աջակցելու որևէ նախաձեռնություն դեռևս չի արվում: Լրագրողն ընդամենը ցանկանում է տեղեկատվություն ստանալ, հրապարակել այն և դրանով ավարտել իր առաքելությունը: Որևէ վերլուծություն, քննարկում կամ դրանց հիման վրա ոստիկանության հետ հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ուղղությամբ որևէ առաջարկություն չի ներկայացվել, մինչդեռ ոստիկանությունը զգում է հասարակության վստահության և աջակցության կարիքը, որոնք կարող են ամրապնդվել և կայանալ առաջին հերթին ԶԼՄ-ների շնորհիվ: Հասարակության վստահության դեպքում կբարձրանա ոստիկանության աշխատանքի արդյունավետությունը, սակայն ներկայումս տիրող հոգեբանությունն այնպիսին է, որ բոլորը միայն սպասում և պահանջում են ոստիկանությունից՝ առանց որևէ հանդիպակաց աջակցություն առաջադրելու[5]:

---

[4] «Լոռի» հեռուստաընկերության լրատվական հաղորդում, 2009թ. հոկտեմբերի 25
[5] «Լուսալիք» հեռուստաընկերության լրատվական հաղորդում, 2009թ. ապրիլի 11

- Լրագրողները ոստիկանությունից պահանջում են գործի վերաբերյալ տեղեկատվություն, որը գերազանցում է անհրաժեշտ և թույլատրելի սահմանները, ինչը խոչընդոտում է նախաքննության գաղտնիության, անմեղության կանխավարկածի և մասնավոր կյանքի անձեռնմխելիության սկզբունքների կենսագործմանն, ինչպես նաև օպերատիվ աշխատանքի արդյունավետ կազմակերպմանը: Վերը թվարկված սկզբունքների խախտմամբ տեղեկատվության տրամադրումը շատ դեպքերում կարող է նպաստել հանցագործների կողմից կիրառվող հնարքների կատարելագործմանը:

Օրինակ՝ այդպիսին կարող են համարվել հանցագործության բացահայտմանն ուղղված օպերատիվ աշխատանքի առանձնահատկությունների, մեթոդաբանության, քրեագիտության, կիրառվող տեխնիկական միջոցների վերաբերյալ մանրամասներ պարունակող հոդվածների (նյութերի) տպագրումը կամ առանձին հանցագործության դեպքերի բացահայտմանն ուղղված ոստիկանության միջոցառումների վերաբերյալ տեղեկությունների հրապարակումը: Մինչդեռ, ինչպես նշեցին բոլոր կլոր սեղանների մասնակից ոստիկանության մարզային վարչությունների և նրանց ենթակա բաժինների բարձրաստիճան ոստիկաններն, իրենք պատրաստ են ՁԼՄ-ներին տրամադրելու տեղեկատվություն այնքանով, որքանով դա չի խանգարի ոստիկանության աշխատանքներին՝ հանցագործության բացահայտմանը, քրեական գործի նախաքննության գաղտնիությանը և այլն:

Մասնավորապես, Սյունիքի մարզում կլոր սեղանի մասնակից ոստիկանները նշեցին, որ ոստիկանությունն իրավապահ կառույց է և գործում է օրենքի հիման վրա: Ուստի նրանք լրատվության միջոցներին պարտավոր են տեղեկատվություն տրամադրել՝ հաշվի առնելով նախաքննության շահերը և անմեղության կանխավարկածի սկզբունքը: Ոստիկանության առաջնային և գլխավոր խնդիրը լրատվամիջոցներին թարմ սենսացիա տրամադրելը չէ, այլ պայքարը հանցավորության դեմ և հասարակական կարգի պահպանությունը:

Ըստ Շիրակի մարզային ոստիկանության ներկայացուցիչների՝ ոստիկանության այլ ծառայության աշխատակիցը, առանց քննիչի իմացության, չի կարող հրապարակել նախնական տվյալներ, որը հետագայում կխախտի նախաքննության գաղտնիությունը, և ոստիկանության ու զանգվածային լրատվության միջոցների միջև հիմնական ընդհարումները տեղի են ունենում այս հողի վրա:

- Լրագրողները ոչ մասնագիտական մոտեցում են ցուցաբերում ոստիկանության հետ փոխհարաբերություններում, որը խոչընդոտում է արդյունավետ համագործակցությանը: Լրագրողների աշխատանքում նկատվում է պրոֆեսիոնալիզմի բացակայություն: Որպես կանոն, նրանք տեղյակ չեն ոստիկանության գործունեության յուրահատկությունների, քրեական դատավարության խնդիրների ու սկզբունքների, մասնագիտական տերմինաբանության և ընդհանրապես ոստիկանական ծառայությունը կանոնակարգող օրենսդրության մասին:

Մասնավորապես, Կապանում կազմակերպված կլոր սեղանի ժամանակ Սյունիքի ոստիկանները նշեցին, որ իրենց քաղաքում ոստիկանի աշխատանքի մասին առհասարակ հանրությունը պատկերացում չունի՝ միաժամանակ խոստովանելով, որ ոստիկանը տեսախցիկի առջև իրեն կաշկանդված է զգում, և որպես դրա հիմնական պատճառ մատնանշվեց այն, որ շատ դեպքերում հանդիպում են գործից անտեղյակ լրագրողների, որոնք պարզապես տեղյակ չեն ստորաբաժանումների խնդիրների, պահանջների, նրանց իրավունքների ու պարտականությունների մասին: Երբեմն ոստիկանության աշխատակիցների հետ հարցազրույցներից մոնտաժված մասեր են հեռարձակվում, ոստիկանների խոսքերը մեկնաբանվում են յուրովի և կամայական կերպով:

Լրագրողները չպետք է յուրաքանչյուր կամ առաջին իսկ պատահած ոստիկանից պահանջեն իրենց հուզող բոլոր հարցերի պատասխանները: Ոստիկանության ոչ բոլոր աշխատակիցներն են իրավասու պատասխանելու լրագրողներին հետաքրքրող հարցերին: Դա կարող են անել միայն ոստիկանության մարզային վարչության կամ ենթակա բաժինների պետերը, իսկ նրանց բացակայության դեպքում՝ փոխարինող տեղակալները:

Քննարկումների ընթացքում գրեթե բոլոր մարզերում ոստիկանության ներկայացուցիչները միանշանակորեն համակարծիք էին առ այն, որ անհրաժեշտ է առնվազն ոստիկանության յուրաքանչյուր մարզային կառույցում ստեղծել մեկ հաստիք՝ մամուլի խոսնակի կամ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի տեղական պատասխանատուի պաշտոն, որի անմիջական խնդիրը կլինի տեղերում կազմակերպել և համակարգել ԶԼՄ-ների հետ ոստիկանության համագործակցությունը: Ոստիկանության ծառայողների կարծիքով որոշ լրատվամիջոցներ ուղղակի ազատ չեն: Նրանք գտնվում են այս կամ այն անձի կամ միավորման քաղաքական կամ ֆինանսական ազդեցության տակ և շատ դեպքերում ուղղակի կատարում են նրանց պատվերները՝ հանրությանը ներկայացնելով ոչ օբյեկտիվ ու ապակողմնորոշող տեղեկատվություն:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ յուրաքանչյուր մարզում և՛ լրագրողները, և՛ ոստիկանության ներկայացուցիչները, գիտակցելով «Ոստիկանության և զանգվածային լրատվության միջոցների փոխհարաբերությունների բարելավում» թեմայով կլոր սեղանների կարևորությունն ու անհրաժեշտությունը, բարձր գնահատեցին այս նախաձեռնությունը: Թեմայի շուրջ ծավալված բավականին հետաքրքիր քննարկումների արդյունքում եղան նաև միմյանց միջև առկա հիմնախնդիրների լուծման և հետագա փոխհարաբերությունների սերտացմանն ուղղված կոնկրետ առաջարկություններ, ձեռք բերվեցին հստակ պայմանավորվածություններ հետագա համագործակցության շուրջ:

Դրանք հետևյալն են՝

- Պարբերաբար (ամսական, եռամսյակային կամ կիսամյակային կտրվածքով) կազմակերպել մամուլի ասուլիսներ:

Այսինքն՝ մարզային ոստիկանության ղեկավարի կողմից, տարածքային ստորաբաժանումների ղեկավարների մասնակցությամբ, հաճախակի կազմակերպել մամուլի ասուլիսներ և ԶԼՄ-ների միջոցով մարզում տիրող հանցավորության վիճակի, բացահայտման արդյունքների, առանձնահատուկ հնչեղություն ունեցող դեպքերի և ոստիկանության գործունեությանն առնչվող այլ հարցերի շուրջ ազգաբնակչության առջև հանդես գալ հաշվետվությամբ և պարզաբանումներով:

Հատկանշական է, որ կլոր սեղանների ընթացքում ձեռք բերված կոնկրետ համաձայնությունները հաշվի առնելով՝

--Լոռու մարզի ոստիկանության ղեկավարությունը խոստացավ 3 ամիսը մեկ մամուլի ասուլիս հրավիրել՝ ներկայացնելու ոստիկանության Լոռու մարզային վարչության կատարած աշխատանքներն՝ այդ կերպ ապահովելով ԶԼՄ-ների հետ աշխատանքում անհրաժեշտ թափանցիկություն[6],

[6]Տե՛ս «Ոստիկանություն-զանգվածային լրատվամիջոցներ հարաբերությունների բարելավման նպատակով», «Լոռու մարզ» թերթ, թիվ 84 (10372) 2009թ. հոկտեմբերի 28, էջ 1 և «Լուսարձակ» անկախ շաբաթաթերթ, թիվ 11 (4565) 2009թ. նոյեմբեր էջ 4
«Լոռի», «9-րդ ալիք», «Անկյուն+3» և «Միգ» հեռուստաընկերությունների լրատվական հաղորդումներ՝ 2009թ, հոկտեմբերի 25

--Գեղարքունիքի մարզի ոստիկանության ղեկավարությունն ընդգծեց, որ կիսամյակի արդյունքներով հնարավոր է որոշ առումներով տեղեկատվություն ապահովել լրատվության միջոցներին՝ մեկնաբանելով ոստիկանության աշխատանքը, առկա խնդիրներն ու դժվարությունները և այն նվաճումները ու հաջողությունները, որոնք ոստիկանությունը ձեռք է բերել իր գործառութային պարտականությունները կատարելիս[7]:

- Պետք է ձեռնպահ մնալ ծառայողական պարտականությունները կատարող ոստիկանության աշխատակիցների գործողությունները խոչընդոտելուց, այլ հակառակն, ամրապնդել ու զարգացնել ոստիկանության հետ համագործակցությունը:

Տեղական ԶԼՄ-ների միջոցով իրականացնել «Վահան» (զենքի և զինամթերքի հայտնաբերում), «Կանեփ-կակաչ» (թմրամիջոցների հայտնաբերում) և այլ կարևոր միջոցառումների լուսաբանում, հետախուզման մեջ գտնվողների, անհայտ կորածների մասին հայտարարությունների հրապարակում: Բացի այդ, ելնելով մարզերում կատարվող հանցագործությունների յուրահատկություններից, ակտիվացնել ԶԼՄ-ների հետ համագործակցությունը՝ կոնկրետ տեսակի հանցագործությունների դեմ պայքարի ուղղությամբ: Մասնավորապես, Տավուշի մարզում առաջարկվեց համագործակցությունն ակտիվացնել հատկապես սահմանների խախտման, անտառահատման, որսագողության դեմ պայքարում: Մարզերում ոստիկանության ներկայացուցիչների կողմից առաջարկվեց լրագրողներին՝ գործուն աջակցություն ցուցաբերել ոստիկանությանը՝ հատկապես անչափահասների հետ աշխատանքի իրականացման ժամանակ՝ փորձելով բացահայտել նրանց կողմից կատարված հանցագործությունների սոցիալական արմատները: Բացի այդ, նշվեց, որ բացատրական աշխատանքներ է անհրաժեշտ տանել նաև ազգաբնակչության շրջանում՝ ապօրինի զենք-զինամթերքի հանձնման ուղղությամբ:

- Ոստիկանության յուրաքանչյուր մարզային կառույցում նախատեսել տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի սպայական կոչումով պատասխանատու (մամլո քարտուղար) պաշտոն կամ ոստիկանության սպաներից մեկին վերապահել համապատասխան լիազորություններ՝ կատարելու ԶԼՄ-ներին տեղեկատվության տրամադրման պարտականությունները:

[7]«Սևան», «Քյավառ» հեռուստաընկերությունների լրատվական հաղորդումներ, 2009թ. հունիսի 26

Հատկանշական է սեմինարի ընթացքում ձեռք բերված կոնկրետ համաձայնությունները՝

-- Արմավիրի ոստիկանության ներկայացուցիչները հավաստեցին, որ այսուհետ ոստիկանության յուրաքանչյուր բաժնում համապատասխան մեկ սպայական կազմի աշխատակից կապահովի լրատվամիջոցների հետ աշխատանքը՝ նրանց տրամադրելով այն տեղեկությունները, որոնք կարևոր են և թույլատրելի[8]:

-- Շիրակի ոստիկանության ներկայացուցիչները նշեցին, որ կփորձեն միջնորդել ոստիկանության ղեկավարությանը՝ մարզի կտրվածքով ապահովելու համար մեկ հաստիք, որն ուղիղ կապով կաշխատի բոլոր լրատվամիջոցների հետ[9]:

- Ինչպես լրատվամիջոցների, այնպես էլ մարզային ոստիկանության ներկայացուցիչների համար կազմակերպել համապատասխան դասընթացներ:

Մասնավորապես, դասընթացներ կազմակերպել ոստիկանության աշխատակիցների համար «Տեղեկատվության ազատության մասին», «Զանգվածային լրատվամիջոցների մասին» ՀՀ օրենքների, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դրույթների, դրանց կիրառման առանձնահատկությունների, գործող իրավական պրակտիկայի վերաբերյալ, իսկ լրագրողների համար՝ ոստիկանության գործունեության ուղղությունների, դրանք կարգավորող իրավական ակտերի, քրեադատավարության հիմնարար սկզբունքների, դրանց կիրարկման պարզաբանման, իրավական տերմինաբանության և իրավական բնույթի անհրաժեշտ այլ թեմաների շուրջ:

Շիրակի մարզում եղան նաև առաջարկներ՝ այդ ուսումնական պարապմունքները կազմակերպել ոստիկանության և ԶԼՄ-ների ներկայացուցիչների համատեղ մասնակցությամբ, ինչպես նաև ոստիկանության բաժիններում փակցնել «Տեղեկատվության ազատության մասին» և «Զանգվածային լրատվության միջոցների մասին» ՀՀ օրենքների հիմնական դրույթները:

---

[8] «Ալտ» հեռուստաընկերության լրատվական հաղորդում, 2009թ. մայիսի 2

[9] «Ցայգ» հեռուստաընկերության «Ազդարար» լրատվական հաղորդում 2009թ. սեպտեմբերի 26

Բացի այդ, լրագրողները և ոստիկաններն առաջարկեցին որոշակի կոնկրետ կանոններ սահմանել՝ դեպքի վայրում ռեպորտաժներ, նկարահանումներ կատարելու համար: Այդ կապակցությամբ նպատակահարմար է կազմակերպել նաև կրթական հատուկ ծրագրեր՝ լրագրողների, օպերատորների համար, որի կարիքն այսօր կա:

Ոստիկանության բաժիններում որոշակի պարբերականությամբ անցկացնել բաց դռների օրեր, կազմակերպել ոստիկանության և զանգվածային լրատվության միջոցների հետ համատեղ ստուգայցեր, հրավիրել լրագրողներին ոստիկանության աշխատակիցների հետ անցկացնել ծառայության մեկ օր:

Ներկայացվեց առաջարկ՝ լրագրողների մասնակցությամբ ոստիկանների հետ համատեղ մեկ օր պարեկային ծառայություն անցկացնել, որը պատրաստակամությամբ ընդունվեց կլոր սեղանի մասնակիցների կողմից:

Այս առումով անհրաժեշտ է հիշատակել Վայոց Ձորի մարզային ոստիկանության վարչության և ենթակա բաժինների կողմից արդեն իսկ կազմակերպված նմանատիպ բաց դռների օրը:

Նմանատիպ միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը նպատակահարմար է դարձնել շարունակական՝ այն որպես ավանդույթ ձևավորելու նկատառումով:

- Ոստիկանության աշխատակիցների մասնակցությամբ պարբերաբար կազմակերպել հեռուստատեսային հաղորդաշարեր, ուղիղ հեռարձակումներ, հարցազրույցներ՝ նվիրված փոխհամագործակցության ոլորտում ծագող խնդիրներին և լուծումներին:

Ոստիկանության աչքի ընկած բարեխիղճ աշխատակիցների մասին, ինչպես նաև ոստիկանության օրվան նվիրված պատրաստել համապատասխան ռեպորտաժներ:

Ակնհայտ է կլոր սեղանների դրական ազդեցությունը, որի արդյունքներն արդեն իսկ նկատելի են՝

-- Սյունիքում կազմակերպված կլոր սեղանի միջոցառումից շատ կարճ ժամանակ անց «Հանուն վստահության ամրապնդման» վերնագրով «Ո-

ռոտան» թերթը տպագրել է ծավալուն հարցազրույց ոստիկանության բաժնի պետի հետ[10]:

- Բարձրացնել փոխադարձ հարգանքը ոստիկանների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների միջև:

Այն ոստիկանների նկատմամբ, ովքեր ԶԼՄ-ների հետ համագործակցության ընթացքում դրսևորել են պատրաստակամություն, ցուցաբերելով արհեստավարժություն և բարեխղճություն, կիրառել խրախուսանքի միջոցներ և հակառակը՝ պատժել ոչ բարեխիղճ ծառայողներին՝ իրենց ծառայողական պարտականությունները պատշաճ չկատարելու համար[11]:

- Պարբերաբար կազմակերպել կլոր սեղաններ, սեմինարներ, հանդիպումներ ոստիկանության և ԶԼՄ-ների ներկայացուցիչների միջև:

Կոտայքում, Վայոց Ձորում կազմակերպված կլոր սեղանների ժամանակ եղավ առաջարկ՝ նման բնույթի սեմինարներ կազմակերպել նաև ՀՀ ոստիկանության քննչական մարմինների, ճանապարհային ոստիկանության ծառայողների համար, իսկ Արմավիրում առաջարկ եղավ՝ ոստիկանների համար հանդիպումներ կազմակերպել Սուրբ Էջմիածնի հոգևորականների հետ, ինչպես նաև անցկացնել լրագրողների հետ համատեղ սպորտային միջոցառումներ:

[10]Տե՛ս «Հանուն վստահության ամրապնդման», «Ռոռտան» թերթ, թիվ 9 (114), 2009թ. սեպտեմբերի 22, էջ 2

[11]Տե՛ս «Զանգակ» հեռուստաընկերության լրատվական հաղորդում, 2009թ. հունիսի 26

ՀԱՎԵԼՎԱԾ

Ոստիկանություն և ՁԼՄ-ներ փոխհարաբերությունների բարելավում թեմայով կլոր սեղանի մասնակիցների ցուցակներն ըստ մարզերի:

Կոտայքի մարզ, ք. Ծաղկաձոր

Հ/Հ	Անուն, ազգանուն	Կազմակերպություն, պաշտոն
1	Ա. Աբրահամյան	Կոտայքի ՄՈ վարչության պետ, գնդապետ
2	Վ. Եսայան	Կոտայքի ՄՈ վարչության ՔՀԲ ՀԿԳ ավագ օպերլիազոր, մայոր
3	Վ. Գաբրիելյան	Կոտայքի ՄՈ վարչության ծառայության բաժանմունքի ավագ տեսուչ, ոստիկանության մայոր
4	Ա. Ենոքյան	Կոտայքի ՄՈ վարչության շտաբի հետաքննության գծով ավագ տեսուչ, ավագ լեյտենանտ
5	Ռ. Խալաթյան	Կոտայքի ՄՈ վարչության փորձաքրեագիտական խմբի փորձագետ, կապիտան
6	Պ. Խաչիյան	Կոտայքի ոստիկանության բաժնի պետի ծառայության գծով տեղակալ, փոխգնդապետ
7	Հ. Հունանյան	Կոտայքի ոստիկանության բաժնի հետաքնության գծով ավագ տեսուչ, փոխգնդապետ
8	Ռ. Հովակիմյան	Կոտայքի ոստիկանության բաժնի պրոֆիլակտիկայի բաժանմունքի ավագ տեղամասային տեսուչ, կապիտան
9	Ս. Մարկոսյան	Հրազդանի ոստիկանության բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ, փոխգնդապետ
10	Ա. Հովհաննիսյան	Հրազդանի ոստիկանության բաժնի պետի ծառայության գծով տեղակալ, փոխգնդապետ
11	Մ. Պետրոսյան	Հրազդանի ոստիկանության բաժնի հետքաննության գծով ավագ տեսուչ, կապիտան
12	Դ. Մարգարյան	Նաիրիի ոստիկանության բաժնի անձնակազմի գծով տեղակալ, փոխգնդապետ
13	Ա. Լևոնյան	Նաիրիի ոստիկանության ոստիկանության բաժնի հետաքննության գծով տեսուչ, ավագ լեյտենանտ
14	Ս. Աֆյան	Չարենցավանի ոստիկանության բաժնի պետի ծառայության գծով տեղակալ, փոխգնդապետ
15	Ա. Իսկանդարյան	Չարենցավանի ոստիկանության բաժնի հետաքննության գծով տեսուչ, լեյտենանտ
16	Լ. Մկրտչյան	Ոստիկանության պահեստազորի գնդապետ

17	Հ. Հովհաննիսյան	«Լուսալիք» հեռուստաընկերության տնօրեն
18	Գ. Բալաբյան	«Լուսալիք» հեռուստաընկերություն
19	Ս. Բալաբեկյան	«Լուսալիք» հեռուստաընկերություն
20	Ս. Մանուչարյան	«Լուսալիք» հեռուստաընկերություն
21	Շ. Դավթյան	«Լուսալիք» հեռուստաընկերություն
22	Ս. Հակոբյան	«Նարեկ» հեռուստաընկերության տնօրեն
23	Ա. Հովհաննիսյան	«Կոտայք» օրաթերթ
24	Մ. Հարությունյան	«Հրազդան» հեռուստաընկերություն, տնօրեն
25	Ն. Կարապետյան	«Հրազդան» հեռուստաընկերություն
26	Վ. Թորոսյան	«Հրազդան» հեռուստաընկերություն
27	Հ. Սարգսյան	«Հրազդան» հեռուստաընկերություն
28	Մ. Բեգյան	ՀՀ իրավաբանների միություն
29	Հ. Ստեփանյան	ՀՀ իրավաբանների միություն
30	Ս. Բաբայան	Հասարակական կազմակերպության ներկայացուցիչ

Արմավիրի մարզ, ք. Արմավիր

Հ/Հ	Անուն, ազգանուն	Կազմակերպություն, պաշտոն
1	Տ. Եսայան	Արմավիրի ՄՈ վարչության պետ, ոստիկանության գնդապետ
2	Ս. Խմելյան	Արմավիրի ՄՈ վարչության պետի օպերատիվ գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ
3	Գ. Հակոբյան	Արմավիրի ՄՈ վարչության պետի ծառայության գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ
4	Է. Խաչիկյան	Արմավիրի ՄՈ վարչության պետի կադրերի գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ
5	Կ. Ասատրյան	Արմավիրի ՄՈ վարչության շտաբի պետ, ոստիկանության փոխգնդապետ
6	Մ. Գալստյան	Արմավիրի ՄՈ վարչության փորձաքրեագիտական խմբի ավագ փորձագետ, ոստիկանության փոխգնդապետ
7	Ա. Գևորգյան	Արմավիրի ոստիկանության բաժնի պետ, ոստիկանության գնդապետ
8	Ս. Սարգսյան	Արմավիրի ոստիկանության բաժնի հետաքննության գծով ավագ տեսուչ, ոստիկանության մայոր
9	Գ. Խաչատրյան	Վաղարշապատի ոստիկանության բաժնի պետ, ոստիկանության գնդապետ
10	Մ. Խաչատրյան	Վաղարշապատի ոստիկանության բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետի տեղակալ,

		ոստիկանության մայոր
11	Ս. Սամսոնյան	Վաղարշապատի ոստիկանության բաժնի ինֆորմացիայի և վերլուծության ավագ տեսուչ, ոստիկանության մայոր
12	Ա. Սաղաթելյան	Վաղարշապատի ոստիկանության բաժնի անչափահասների գործերով բաժանմունքի տեսուչ, ոստիկանության լեյտենանտ
13	Վ. Մինասյան	Բաղրամյանի ոստիկանության բաժնի պետ, ոստիկանության գնդապետ
14	Պ. Խաչատրյան	Բաղրամյանի ոստիկանության բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ
15	Ա. Վաթյան	Մեծամորի ոստիկանության բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ
16	Խ. Դանիելյան	«ԱԼՏ» հեռուստաընկերության տնօրեն
17	Ա. Ստեփանյան	«ԱԼՏ» հեռուստաընկերություն
18	Ա. Դանիելյան	«ԱԼՏ» հեռուստաընկերություն
19	Լ. Ղազարյան	«ԱԼՏ» հեռուստաընկերություն
20	Մ. Ինջիգուլյան	«ԱԼՏ» հեռուստաընկերություն
21	Հ. Հարությունյան	«ԱԼՏ» հեռուստաընկերություն
22	Ա. Խաֆարյան	«ԱԼՏ» հեռուստաընկերություն
23	Վ. Երանոսյան	«ՆՈՅ Հայաստան» հեռուստաընկերության տնօրեն
24	Ա. Ասատրյան	«ՆՈՅ Հայաստան» հեռուստաընկերություն
25	Ջ. Եղիազարյան	«ՆՈՅ Հայաստան» հեռուստաընկերություն
26	Ռ. Սահակյան	«Հայրենականչ» ամսաթերթի գլխավոր խմբագիր
27	Գ. Մանուկյան	«Հայրենականչ» ամսաթերթ
28	Ա. Դավթյան	«Հայրենականչ» ամսաթերթ
29	Մ. Հարությունյան	«Շրջադարձ» ամսաթերթ
30	Հ. Վարդանյան	Արմավիրի մարզպետարանի լրատվության բաժնի պետ

Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ

Հ/Հ	Անուն, ազգանուն	Կազմակերպություն, պաշտոն
1	Լ. Մխիթարյան	Արագածոտնի ՄՈ վարչության պետի կադրերի և անձնակազմի գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ
2	Ս. Մկրտչյան	Արագածոտնի ՄՈ վարչության շտաբի պետ, ոստիկանության գնդապետ

3	Ս. Ղազարյան	Արագածոտնի ՄՈ վարչության ծառայության բաժանմունքի պետ,ոստիկանության փոխգնդապետ
4	Ա. Հարությունյան	Արագածոտնի ՄՈ վարչության քրեական հետախուզության բաժանմունքի ավագ օպերլիազոր, ոստիկանության մայոր
5	Ս. Գասպարյան	Աշտարակի ոստիկանության բաժնի պետի անձնակազմի գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ
6	Կ. Սաղոյան	Աշտարակի ոստիկանության բաժնի պետի ծառայության գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ
7	Ա. Ավետիսյան	Աշտարակի ոստիկանության բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետի տեղակալ, ոստիկանության մայոր
8	Ա. Մատինյան	Աշտարակի ոստիկանության բաժնի պրոֆիլակտիկայի բաժանմունքի պետ, ոստիկանության փոխգնդապետ
9	Գ. Պարոնյան	Աշտարակի ոստիկանության բաժնի անչափահասների գործերով բաժանմունքի պետ, ոստիկանության մայոր
10	Է. Խաչատրյան	Թալինի ոստիկանության բաժնի պետի անձնակազմի գծով տեղակալ, ոստիկանության մայոր
11	Ա. Խաչատրյան	Թալինի ոստիկանության բաժնի պրոֆիլակտիկայի բաժանմունքի պետ, ոստիկանության մայոր
12	Հ. Կարապետյան	Ապարանի ոստիկանության բաժնի պետի անձնակազմի գծով տեղակալ, ոստիկանության մայոր
13	Կ. Կարապետյան	Ապարանի ոստիկանության բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ, ոստիկանության մայոր
14	Կ. Խլղաթյան	Արագածի ոստիկանության բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ, ոստիկանության մայոր
15	Մ. Հունանյան	Արագածի ոստիկանության բաժնի քրեական հետախուզության խմբի ավագ օպերլիազոր, ոստիկանության մայոր
16	Վ. Գրիգորյան	«Արագած Աշխարհ» թերթի գլխավոր խմբագիր
17	Կ. Ասատրյան	«Արագած Աշխարհ» թերթ
18	Գ. Գասպարյան	«Արագած Աշխարհ» թերթ
19	Ա. Նազարյան	«Կանթեղն Արագածի» թերթի գլխավոր խմբագիր
20	Թ. Մխիթարյան	«Կանթեղն Արագածի» թերթ
21	Խ. Նազարյան	«Կանթեղն Արագածի» թերթ

22	Հ. Խաչատրյան	«Թալին Աշխարհ» թերթի գլխավոր խմբագիր
23	Մ. Մեսրոպյան	«Թալին Աշխարհ» թերթ
24	Մ. Վարդանյան	Աշտարակի քաղաքապետարանի լրատվության բաժնի մասնագետ
25	Ս. Լևոնյան	Արագածոտնի մարզպետարանի լրատվության բաժնի մասնագետ

Արարատի մարզ, ք. Արտաշատ

Հ/Հ	Անուն, ազգանուն	Կազմակերպություն, պաշտոն
1	Մ. Մելքոնյան	Արարատի ՄՈ վարչության պետ, ոստիկանության գնդապետ
2	Ս. Քոչարյան	Արարատի ՄՈ վարչության պետի օպերատիվ գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ
3	Ա. Ալեքսանյան	Արարատի ՄՈ վարչության պետի ծառայության գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ
4	Ա. Մանուկյան	Արարատի ՄՈ վարչության պետի կադրերի և անձնակազմի գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ
5	Մ. Ատոմյան	Արարատի ՄՈ վարչության շտաբի պետ, ոստիկանության փոխգնդապետ
6	Ա. Տեր-Մարգարյան	Արարատի ոստիկանության բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ
7	Ա. Հարությունյան	Արարատի ոստիկանության բաժնի պետի կադրերի և անձնակազմի գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ
8	Ս. Մկրտչյան	Մասիսի ոստիկանության բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ, ոստիկանության մայոր
9	Ռ. Շուշանյան	Մասիսի ոստիկանության բաժնի պետի կադրերի և անձնակազմի գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ
10	Հ. Մովսիսյան	Արտաշատի ոստիկանության բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ
11	Վ. Դավթյան	Արտաշատի ոստիկանության բաժնի պետի կադրերի և անձնակազմի գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ
12	Ա. Մանուկյան	«ԱրտաշատTV» հեռուստաընկերության տնօրեն
13	Ա. Հակոբովա	«ԱրտաշատTV» հեռուստաընկերություն
14	Հ. Մանուկյան	«ԱրտաշատTV» հեռուստաընկերություն

15	Գ. Նահապետյան	«ԱրտաշատTV» հեռուստաընկերություն
16	Ն. Բեգլարյան	«Արարատ» թերթի գլխավոր խմբագիր
17	Ա. Մարգարյան	«Արարատ» թերթ
18	Գ. Նուրիջանյան	«Արարատ» թերթ
19	Ա. Նիկողոսյան	«Արտաշատ» թերթի գլխավոր խմբագիր
20	Գ. Հովսեփյան	«Արտաշատ» թերթ
21	Գ. Խաչատրյան	Արարատի մարզի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ
22	Ք. Խաչատրյան	Արարատի մարզի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ

Գեղարքունիքի մարզ, ք. Սևան

Հ/Հ	Անուն, ազգանուն	Կազմակերպություն, պաշտոն
1	Մ. Շահինյան	Գեղարքունիքի ՄՈ վարչության պետ, ոստիկանության գնդապետ
2	Ս. Քեշիշյան	Գեղարքունիքի ՄՈ վարչության պետի օպերատիվ գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ
3	Յու. Խաչատրյան	Գեղարքունիքի ՄՈ վարչության պետի ծառայության գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ
4	Վ. Պողոսյան	Գեղարքունիքի ՄՈ վարչության պետի կադրերի և անձնակազմի գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ
5	Կ. Սիմոնյան	Գեղարքունիքի ՄՈ վարչության շտաբի պետ, ոստիկանության փոխգնդապետ
6	Էդ. Պետրոսյան	Գեղարքունիքի ոստիկանության քննչական բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ
7	Լ. Մուսիկարոյան	Գավառի ոստիկանության բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ
8	Գ. Վարդանյան	Գավառի ոստիկանության բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ
9	Հ. Վարդանյան	Սևանի ոստիկանության բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ
10	Հ. Ավետիսյան	Սևանի ոստիկանության բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ
11	Գ. Գինոյան	Մարտունու ոստիկանության բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ

12	Գ. Ավագյան	Մարտունու ոստիկանության բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ
13	Ս. Գալստյան	Վարդենիսի ոստիկանության բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ
14	Ա. Կարապետյան	Վարդենիսի ոստիկանության բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ
15	Յու. Գևորգյան	Ճամբարակի ոստիկանության բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ
16	Ա. Խանդանյան	«Քյավառ» հեռուստաընկերության տնօրեն
17	Ն. Արևշատյան	«Քյավառ» հեռուստաընկերություն
18	Վ. Դաբաղյան	«Քյավառ» հեռուստաընկերություն
19	Վ. Խաչատրյան	«Քյավառ» հեռուստաընկերություն
20	Ս. Բարսեղյան	«STV1» լրատվական ծառայության պետ
21	Գ. Մանուկյան	«STV1» հեռուստաընկերություն
22	Գ. Հովհաննիսյան	«STV1» հեռուստաընկերություն
23	Ա. Ղուկասյան	«STV1» հեռուստաընկերություն
24	Դ. Երանոսյան	«Զանգակ» հեռուստաընկերության տնօրեն
25	Ա. Կարապետյան	«Զանգակ» հեռուստաընկերություն
26	Տ. Մարկոսյան	«Զանգակ» հեռուստաընկերություն
27	Խ. Խլղաթյան	«Գեղամա Աշխարհ» թերթի գլխավոր խմբագիր
28	Հ. Գրիգորյան	«Գեղամա Աշխարհ» թերթ
29	Պ. Հայրապետյան	«Սևան» թերթի գլխավոր խմբագիր
30	Ա. Ղուկասյան	«Սևան» թերթ
31	Լ. Սահակյան	«Սևան» թերթ

Տավուշի մարզ, ք. Իջևան

Հ/Հ	Անուն, ազգանուն	Կազմակերպություն, պաշտոն
1	Ս. Ավետիսյան	Տավուշի ՄՈ վարչության պետի կադրերի գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ
2	Ա. Ղուշչյան	Նոյեմբերյանի ոստիկանության բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ

3	Ս.Համբարձումյան	Դիլիջանի ոստիկանության բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ
4	Վ. Գևորգյան	Դիլիջանի ոստիկանության բաժնի պետի անձնակազմի գծով տեղակալ, ոստիկանության մայոր
5	Ն. Ղալումյան	Տավուշի ՄՈ վարչության շտաբի հատուկ հանձնարարություններով ավագ տեսուչ, ոստիկանության մայոր
6	Մ. Սայան	Տավուշի ՄՈ վարչության շտաբի ավագ տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ
7	Հ. Վարդանյան	Իջևանի ոստիկանության բաժնի ՔՀԲ պետ, ոստիկանության փոխգնդապետ
8	Է. Մարգարյան	Իջևանի ոստիկանության բաժնի հետաքննության գծով տեսուչ, ոստիկանության լեյտենանտ
9	Գ. Խաչատրյան	Տավուշի ՄՈ վարչության ծառայության բաժանմունքի ավագ տեսուչ, ոստիկանության կապիտան
10	Ս. Գալստյան	Տավուշի ոստիկանության բաժնի պետի ծառայության գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ
11	Հ. Թիլիբյան	Իջևանի ոստիկանության բաժնի անչափահասների գործերով խմբի տեսուչ, ոստիկանության լեյտենանտ
12	Մ. Բուդաղյան	Նոյեմբերյանի ոստիկանության բաժնի պրոֆ. խմբի տեղամասային տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ
13	Ա. Մայիլյան	Տավուշի ոստիկանության բաժնի քրեական հետախուզության օպերլիազոր, ոստիկանության ավագ լեյտենանտ
14	Գ. Հակոբյան	Դիլիջանի ոստիկանության բաժնի պրոֆիլակտիկայի բաժանմունքի պետ, ոստիկանության մայոր
15	Ա. Մաթևոսյան	Դիլիջանի ոստիկանության բաժնի ՃՊՎ պետ, ոստիկանության կապիտան
16	Կ. Ներսիսյան	«Իջևան Ստուդիա» հեռուստաընկերության տնօրեն
17	Ն. Խաչիկյան	«Իջևան Ստուդիա» հեռուստաընկերություն
18	Գ. Աղբալյան	«Իջևան Ստուդիա» հեռուստաընկերություն
19	Վ. Ճաղարյան	«Իջևան Ստուդիա» հեռուստաընկերություն

20	Ռ. Սարգսյան	«Քամուտ» հեռուստաընկերության տնօրեն
21	Ա. Սիմոնյան	«Դիլիջան» թերթի գլխավոր խմբագիր
22	Տ. Նազինյան	«Իջևան» թերթի գլխավոր խմբագիր
23	Մ. Եգանյան	«Իջևան» թերթ
24	Ա. Ոսկանյան	«Իջևան» թերթ
25	Ռ. Սիմոնյան	«Տավուշ» թերթի գլխավոր խմբագիր
26	Ս. Վեռանյան	«Տավուշ» թերթ
27	Ա. Մելիքսեթյան	Տավուշի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ

Սյունիքի մարզ, ք. Կապան

Հ/Հ	Անուն, ազգանուն	Կազմակերպություն, պաշտոն
1	Վ. Ավագյան	Սյունիքի ՄՈ վարչության պետի օպերատիվ գծով տեղակալ, ոստիկանության մայոր
2	Պ. Ավետիսյան	Սյունիքի ՄՈ վարչության պետի ծառայության գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ
3	Վ. Դավթյան	Սյունիքի ՄՈ վարչության պետի կադրերի գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ
4	Ա. Ղահրամանյան	Սյունիքի ՄՈ շտաբի պետ, ոստիկանության փոխգնդապետ
5	Հ. Սողոմոնյան	Սիսիանի ոստիկանության բաժնի պետ, ոստիկանության գնդապետ
6	Ս. Առաքելյան	Գորիսի ոստիկանության բաժնի պետ, ոստիկանության գնդապետ
7	Ա. Գևորգյան	Կապանի ոստիկանության բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ
8	Ա. Առաքելյան	Մեղրիի ոստիկանության բաժնի պետ, ոստիկանության գնդապետ
9	Ս. Ավետիսյան	Սյունիքի ՄՈ վարչության ծառայության բաժանմունքի պետ, ոստիկանության գնդապետ
10	Գ. Գասպարյան	Կապանի Ոստիկանության բաժնի Քաջարանի բաժանմունքի պետ, ոստիկանության փոխգնդապետ
11	Տ. Գասպարյան	Սյունիքի ոստիկանության քննչական բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ
12	Ա. Ասրյան	Սյունիքի ոստիկանության քննչական բաժնի պետի տեղակալ, ոստիկանության մայոր

13	Ա. Գալստյան	ՀՀ Ոստիկանության ՃՈ 2-րդ սպայական գումարտակի 6-րդ վաշտի հրամանատար, ոստիկանության փոխգնդապետ
14	Ք. Պողոսյան	Գորիսի անձնագրային բաժանմունքի պետ, ոստիկանության փոխգնդապետ
15	Ա. Օվչյան	Կապանի ոստիկանության պահպանության բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ
16	Զ. Վարդանյան	Կապանի ոստիկանության բաժնի անչափահասների գործերով խմբի ավագ տեսուչ, ոստիկանության մայոր
17	Ս. Մանուկյան	«Խուստուփ TV» հեռուստաընկերության տնօրեն
18	Լ. Միքայելյան	«Խուստուփ TV» հեռուստաընկերություն
19	Է. Բաղդասարյան	«Խուստուփ TV» հեռուստաընկերություն
20	Ա. Հովակիմյան	«Սիսիանի Ձայն» թերթի գլխավոր խմբագիր
21	Մ. Հովսեփյան	«Սիսիանի Ձայն» թերթ
22	Մ. Մաշուրյան	«Լաստ» հեռուստաընկերություն
23	Ա. Ամիրյան	«Որոտան» թերթի գլխավոր խմբագիր
24	Ա. Մարգարյան	«Որոտան» թերթ
25	Վ. Օրբելյան	«Սյունյաց Երկիր» թերթ
26	Ս. Շահնազարյան	«Բանուգործ» թերթի գլխավոր խմբագիր
27	Վ. Սարգսյան	«Սոսի» հեռուստաընկերության տնօրեն
28	Ն. Միրզախանյան	«Սոսի» հեռուստաընկերություն
29	Հ. Թովմասյան	«Սոսի» հեռուստաընկերություն
30	Հ. Միքայելյան	«Սոսի» հեռուստաընկերություն

Շիրակի մարզ, ք. Գյումրի

Հ/Հ	Անուն, ազգանուն	Կազմակերպություն, պաշտոն
1	Ա. Տեր-Թովմասյան	Շիրակի ՄՈ վարչության պետ, ոստիկանության գնդապետ
2	Գ. Թաղևոսյան	Շիրակի ՄՈ վարչության պետի օպերատիվ գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ
3	Ա. Գորգինյան	Շիրակի ՄՈ վարչության պետի ծառայության գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ
4	Շ. Շահնազարյան	Գյումրիի ոստիկանության բաժնի պետ, ոստիկանության գնդապետ
5	Հ. Կիրակոսյան	Գյումրիի ոստիկանության բաժնի պետի ծառայության գծով տեղակալ, ոստիկանության

		փոխգնդապետ
6	Ռ. Համբարյան	Գյումրիի ոստիկանության բաժնի 2-րդ բաժանմունքի պետ, ոստիկանության փոխգնդապետ
7	Ա. Քոչարյան	Գյումրիի ոստիկանության բաժնի հետաքննության բաժանմունքի ավագ տեսուչ, ոստիկանության մայոր
8	Ա. Ժամկոչյան	Գյումրիի ոստիկանության բաժնի անչափահասների գործերով բաժանմունքի տեսուչ, ոստիկանության կապիտան
9	Տ. Պետրոսյան	Արթիկի ոստիկանության բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ
10	Հ. Տոնոյան	Անիի ոստիկանության բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ
11	Ռ. Մանվելյան	Անիի ոստիկանության բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ
12	Ա. Գրիգորյան	Ախուրյանի ոստիկանության բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ
13	Ա. Հովհաննիսյան	Ախուրյանի ոստիկանության բաժնի պրոֆիլակտիկայի բաժանմունքի պետ, ոստիկանության փոխգնդապետ
14	Վ. Ղազարյան	Աշոցքի ոստիկանության բաժնի պետ, ոստիկանության գնդապետ
15	Վ. Աբաջյան	Ամասիայի ոստիկանության բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ
16	Ա. Հովհաննիսյան	«Շանթ» հեռուստաընկերություն
17	Ա. Խաչատրյան	«Շանթ» հեռուստաընկերություն
18	Ա. Գյուրեղյան	«Ցայգ» հեռուստաընկերություն
19	Վ. Նախչկարյան	«Ցայգ» հեռուստաընկերություն
20	Ն. Մելքոնյան	«Ցայգ» հեռուստաընկերություն
21	Ա. Ավետիսյան	«Ցայգ» հեռուստաընկերություն
22	Ն. Բաղդասարյան	«Ցայգ» հեռուստաընկերություն
23	Ե. Մեխակյան	«Շրջապատ» թերթի գլխավոր խմբագիր
24	Ս. Հունանյան	«Շրջապատ» թերթ
25	Ա. Մարտիրոսյան	«Հինգշաբթի» թերթի գլխավոր խմբագիր
26	Ս. Գրիգորյան	Շիրակի մարզի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար
27	Լ. Բարսեղյան	Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ՀԿ շահերի պաշտպանության և աջակցման հակակոռուպցիոն

		կենտրոնի ղեկավար
28	Ս. Մարգարյան	«Շիրակ» թերթի գլխավոր խմբագիր
29	Ա. Վարդանյան	«Գալա» հեռուստաընկերություն
30	Է. Մխիթարյան	«Գալա» հեռուստաընկերություն

Լոռու մարզ, ք. Վանաձոր

Հ/Հ	Անուն, ազգանուն	Կազմակերպություն, պաշտոն
1	Ա. Համբարյան	Լոռու ՄՈ վարչության պետ, ոստիկանության գնդապետ
2	Վ. Բաղալյան	Լոռու ՄՈ վարչության պետի անձնակազմի և կադրերի գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ
3	Ս. Հարությունյան	Լոռու ՄՈ վարչության շտաբի պետ, ոստիկանության գնդապետ
4	Ն. Սուքիասյան	Տաշիրի ոստիկանության բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ
5	Վ. Նարգիզյան	Տաշիրի ոստիկանության բաժնի պետի անձնակազմի գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ
6	Ա. Շահվերդյան	Սպիտակի ոստիկանության բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ
7	Ա. Խառատյան	Սպիտակի ոստիկանության բաժնի պետի անձնակազմի գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ
8	Ա. Հարությունյան	Թումանյանի ոստիկանության բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ
9	Դ. Մայիլյան	Թումանյանի ոստիկանության բաժնի պետի անձնակազմի գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ
10	Ա. Ավետիսյան	Ստեփանավանի ոստիկանության բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ
11	Է. Շարմազանով	Գուգարքի ոստիկանության բաժնի պետ, ոստիկանության մայոր
12	Գ. Մարկոսյան	Գուգարքի ոստիկանության բաժնի պետի անձնակազմի գծով տեղակալ, ոստիկանության մայոր
13	Հ. Սարգսյան	Վանաձորի ոստիկանության բաժնի պետի անձնակազմի գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ
14	Ա. Գրիգորյան	Լոռու ՄՈ վարչության շտաբի հատուկ

		հանձնարարություններով ավագ տեսուչ, ոստիկանության մայոր
15	Ա. Կարապետյան	Ոստիկանության Լոռու ՄՈ կադրերի և ԱՀՏԱ խմբի ավագ տեսուչ, ոստիկանության մայոր
16	Լ. Սարգսյան	«Լոռի TV» հեռուստառադիոընկերություն
17	Լ. Աբրահամյան	«9-րդ ալիք» հեռուստաընկերություն
18	Ն. Ներսիսյան	«9-րդ ալիք» հեռուստաընկերություն
19	Ս. Անտոնյան	«9-րդ ալիք» հեռուստաընկերություն
20	Ա. Մանաջանյան	«Անկյուն գումարած 3» հեռուստաընկերություն
21	Ն. Օսյան	«Անկյուն գումարած 3» հեռուստաընկերություն
22	Ա. Հովսեփյան	«Անկյուն գումարած 3» հեռուստաընկերություն
23	Ֆ. Ափուջանյան	«Լուսարձակ» թերթի գլխավոր խմբագիր
24	Ա. Հովհաննիսյան	«Լուսարձակ» թերթ
25	Մ. Միկոյան	«Լոռու մարզ» թերթի գլխավոր խմբագիր
26	Ա. Չոբանյան	«Լոռու մարզ» թերթ
27	Գ. Սարգսյան	«Վանաձորյան խճանկար» շաբաթաթերթ
28	Մ. Պապյան	«Վանաձորյան խճանկար» շաբաթաթերթ
29	Ք. Մարկոսյան	«Միգ» հեռուստառադիոընկերություն
30	Կ. Վանեսյան	«Միգ» հեռուստառադիոընկերություն
31	Ն. Հովհաննիսյան	«Ազատություն» ռադիոկայանի լրագրող

Վայոց Ձորի մարզ, ք. Ջերմուկ

Հ/Հ	Անուն, ազգանուն	Կազմակերպություն, պաշտոն
1	Է. Կալիյան	Վայոց ձորի ՄՈ վարչության պետ, ոստիկանության գնդապետ
2	Մ. Դավթյան	Վայոց ձորի ՄՈ վարչության պետի օպերատիվ գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ
3	Վ. Հարությունյան	Վայոց ձորի ՄՈ վարչության պետի ծառայության գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ
4	Վ. Ենգիբարյան	Վայոց ձորի ՄՈ վարչության պետի կադրերի և անձնակազմի գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ
5	Ա. Արտաշյան	Վայոց ձորի ՄՈ շտաբի պետ, ոստիկանության փոխգնդապետ
6	Գ. Պետրոսյան	Եղեգնաձորի ոստիկանության բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ
7	Տ. Գալստյան	Վայքի ոստիկանության բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ

8	Ա. Խաչատրյան	Ջերմուկի ոստիկանության բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ
9	Մ. Ալեքսանյան	Եղեգնաձորի ոստիկանության պահպանության բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ
10	Ա. Գևորգյան	Ջերմուկի ոստիկանության պահպանության բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ
11	Վ. Հովհաննիսյան	Ոստիկանության Եղեգնաձորի անձնագրային բաժանմունքի պետ, ոստիկանության փոխգնդապետ
12	Ա. Հովհաննիսյան	Եղեգնաձորի ոստիկանության բաժնի պետի կադրերի գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ
13	Գ. Համբարձումյան	Ջերմուկի ոստիկանության բաժնի պետի ծառայության գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ
14	Ե. Աղամյան	Վայոց ձորի ՄՈ վարչության ծառայության խմբի պրոֆիլակտիկայի ավագ տեսուչ, ոստիկանության մայոր
15	Ա. Բունիաթյան	«Վայոց ձոր» թերթի գլխավոր խմբագիր
16	Ա. Հարությունյան	«Վայոց ձոր» թերթ
17	Ն. Զորանյան	«Վայոց ձոր» թերթ
18	Մ. Մարգարյան	«Վայոց ձոր» թերթ
19	Ա. Վարդանյան	«Վայոց ձոր» թերթ
20	Ս. Դովլաթյան	«Վարդաձոր» թերթի գլխավոր խմբագիր
21	Ս. Մարգարյան	Վայոց ձորի մարզի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար

ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Թումանյան 15, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am

ԴԻԼԻՋԱՆ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԼՐԱԳԻՐ
ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ-ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ
NCLR
ՏԱՎՈՒՇ
№ 06 49
2 Ցեսանկյուն
ՈՍՏԻԿԱՆԸ ԿԴԱՌՆԻ՝ ԼՐԱԳՐՈՂԻ ԲԱՐԵԿԱՄԸ
Ո՞Վ է ԿԱՆԳՆԵՍ ԽՈՂՈՎԱԿ
Ամրագիր
ԱՐԱԳԱԾ
ԱՇԽԱՐՀ
Լոռու Մարզ
LORU MARZ
Regional newspaper
Մարզային լրատվական
Հանրապետության 20, 2009 թ., լրագրի թիվ 84 (10372)
Թումանյանը գիտական հոդվածներում, գեղերում եւ նկարներում
Ոստիկանություն-զանգվածային լրատվամիջոցներ հարաբերությունների բարելավման նպատակով
Ինչպես կիրառել «Տեղեկատվություն ազատության մասին» ՀՀ օրենքը
Ամրագիր
Ամրագիրն ամենուրեք
Ամրագիրն ինչպես
Ամրագիրն ինչպես
Ամրագիրն ինչպես